ԼՈՒՍԱՓԱՅԼ

ՏԵՂԵԿԱՏՎ. ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԳ ՏԱՐԻ, ԹԻՎ 110, ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 2015

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 19-ի երեկոյեան ժամը 5:30-ին, հոգեւորականաց դասի եւ երգեցիկ խմբի կազմած թափօրի ուղեկցութեամբ, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի մուտք գործեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, որտեղ թեմի ազգային մարմինների անդամների ու հաւատացեալ ժողովրդի ներկայութեամբ եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ Պատարագ մատուցեց՝ նշուած եկեղեցու անւանակոչութեան տօնի առթիւ, որը միեւնոյն ժամանակ տօնն է Ս.Ա. վանքի:

Հոգեպարար Պատարագին մասնակցում էին նաեւ Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը եւ քահանայից ու դպրաց դասերը, իսկ շարականների երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի:

Արարողութեան ընթացքում պատարագիչ Սրբազան Հայրն իր հայրական պատգամն ուղղեց ներկայ ժողովրդին՝ բնաբան ունենալով Պօղոս առաքեալի խօսքը, որտեղ նա հոգեւոր թմրութեան եւ քնի պատճառն է նկատում մեղքը: Այնուհետեւ թեմական առաջնորդը նշեց, որ մարդը հոգեւոր թմրութեան է մատնւում երկու պատճառներով՝ արտաքին՝ միջավայրի եւ պայմանների, իսկ ներքին՝ իր սրտի ու մտքի ազդեցութեան տակ գտնւելով եւ աւելացրեց. «*Աստուած մարդուն մրափի մատնւած չի թողնում: Աստուած ուզում է, որ բոլորը փրկւեն եւ ճշմարտութեան հասնեն: Տէրը մարդու նկատմամբ ունեցած Իր անհուն սիրոյ պատճառով՝ տարբեր միջոցներով արթնացնում է մեզ*»:

Պատարագիչ Սրբազան Հայրը մի այլ տեղ շարունակեց. «*Աշխարհն այսօր հոգեւոր վերազարթօնքի կարիք ունի, որպէսզի ամենուրեք խաղաղութիւն եւ սէր տիրի, Աստուած ներկայ լինի ամէն մարդու կեանքում, մարդն իր նմանի մէջ տեսնի Աստծու պատկերը եւ յոյսով լցւած իր կեանքն ապրի*»:

Սրբազան Հայրն իր խօսքի երկրորդ բաժնում անդրադառնալով արտագաղթին եւ այդ երեւոյթի բացասական կողմերին, ինչու չէ նաեւ նշելով Հայաստանից տեղի ունեցող արտագաղթը, կոչ արեց՝ արթնանալ եւ տեսնել իրականութիւնը, չակերտեալ ազատութեան համար նման քայլի չդիմել եւ մայր հողի վրայ ապրելով ու հոգեւոր հարստութիւններով ու արժէքներով շրջապատւելով, անարատ եւ առողջ կեանք ապրել՝ Աստծու ներկայութեամբ ու օրհնութեամբ: Սրբազան Հայրը վերջում շնորհաւորելով տօնի առթիւ՝ ներկաներին յորդորեց վերանորոգել քրիստոնէական ուխտը եւ հոգեւոր վերա-

ծնունդ ապրել՝ համայնքն ամրացնելու, մեր կեանքը կազմակերպելու եւ աշխուժացնելու համար:

Յաւարտ Ս. Պատարագի թեմական առաջնորդի նախագահութեամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, եկեղեցու խորանի վրայ, Ս. Յովսէփ Արեմաթացու աջ-մասունքով կատարուեց Զրօրհնէքի կարգը, որից յետոյ հաւատացեալ ժողովուրդը, օրհնուած ջուրն առնելով, դուրս եկաւ եկեղեցուց:

Այնուհետեւ վանքի բակում՝ զանգակատան կողքին, ուր կան բարերարների եւ հոգեւորականների շիրմաքարեր, կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն՝ վանքում ծառայած եկեղեցական ու աշխարհական սպասաւորների եւ բարերարների հոգիների խաղաղութեան համար:

Տօնն աւարտուեց հիւրասիրութեամբ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Շորեքշաբթի՝ 2015 թւականի սեպտեմբերի 2-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Լիբանանի Հ.Յ.Դ., Հեզբալլահ, Ժողովրդական շարժում, ազգային, աշխատաւորական, Դեմոկրատ եւ իսլամ ու քրիստոնեայ այլ կուսակցութիւնների ղեկավարներից եւ ներկայացուցիչներից բաղկացած առաւել քան քսան հոգիանոց մի պատուիրակութիւն:

Պատուիրակութիւնը Իրան էր ժամանել պետական հրաւէրով, որի նպատակն էր երկկողմ համագործակցութեան զարգացման, յարաբերութիւնների ամրապնդման եւ տարածաշրջանում տիրող պատերազմական ծանր կացութիւնից դուրս գալու ելքերի մասին խորհրդակցութիւն ունենալ պետական բարձրաստիճան պատասխանատուների հետ:

Ս. Ամենափրկչեան վանքում հիւրերին ընդառաջ գնացին արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերն ու անդամները եւ Հայ դատի Նոր Զուղայի յանձնախմբի ներկայացուցիչները:

Պատուիրակութիւնը նախ այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ Խաչատուր Կեսարացու անուան թանգարան, ապա Ծաղկեայ դահլիճում հանդիպում ունեցաւ Ճահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի եւ ազգային իշխանութեան պատասխանատուների հետ:

Հանդիպման ընթացքում արժ. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը եւ Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը բարիգալստեան խօսքերով ողջունեցին հիւրերի ներկայութիւնը եւ բարձր գնահատեցին տարածաշրջանում ու յատկապէս Լիբանանում խաղաղութիւն հաստատելու ուղղութեամբ նրանց տարած աշխատանքը: Պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը ներկաներին վստահեցրեց, որ Իրանը եւ հայ ժողովուրդը միշտ կողմ եւ պաշտպան է խաղաղութեան եւ համերաշխութեան: Այդ իսկ պատճառով Իրանում կամ Լիբանանում հայութիւնը պատրաստակամ է գործակցել Լիբանանի խաղաղասէր կուսակցութիւնների հետ: Թեմական խորհրդի ատենապետը խորին շնորհակալութիւն յայտնեց պատուիրակութեան ան-

դամներին՝ Հայ դատի խնդրով նրանց զօրակցութեան համար:

Այնուհետեւ արտայայտուեցին պատուիրակութեան անդամները, ովքեր համապարփակ բացատրութիւն ներկայացրին իրենց գործունէութեան եւ Իրան այցելելու նպատակի մասին, միաժամանակ իրենց զօրակցութիւնը յայտնեցին համայն հայութեանը՝ որպէս խաղաղասէր ժողովրդի:

Վերջում արտայայտուեց հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը՝ յաջողութիւն մաղթելով նրանց գործունէութեանը եւ դրական առաջընթաց ցանկանալով:

Հանդիպումից յետոյ պատուիրակութեան անդամները ներկայանալով Ապրիլեան եղեռնի յուշարձանի առջեւ՝ ծաղիկներ մատուցեցին եւ աղօթեցին նահատակների հոգիների խաղաղութեան համար:

ԱՒՍՏՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Շորեքշաբթի՝ 2015 թւականի սեպտեմբերի 9-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեց Ե.Մ.-ի ամենաերիտասարդ նախարար՝ Աւստրիայի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարար Սեբաստիան Կուրցը:

Ըստ «Ֆարս» լրատուամիջոցի զեկոյցի, նախարարը Իրան էր ժամանել Իրանի Ա.Գ.Ն. Մոհամմամդ Ջաւադ Զարիֆի հրաւէրով, որի նպատակն էր ընդլայնել Իրան-Աւստիա յարբերութիւնները եւ կապերը: Նա Իրանում իր երկօրեայ ներկայութեան ընթացքում Զարիֆի հետ հանդիպումից բացի հանդիպումներ է ունեցել նաեւ պետական այլ բարձրաստիճան պատասխանատուների հետ, որտեղ քննարկուել է տարածքային եւ համազգային զարգացումները:

Ս. Ամենափրկչեան վանքում հիւրերին ընդառաջ գնացին Շահինշահիի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերն ու անդամները, որոնց հետ Ս.Ա. վանքի Ծաղկեայ դահլիճում հանդիպում ունեցաւ նախարարը:

Հանդիպման ընթացքում հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը եւ Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը բարիգալստեան խօսքերով ողջունեցին հիւրերի ներկայութիւնը եւ բարձր գնահատեցին Աւստրիայի պետութեան կողմից հայերի նկատմամբ ցուցաբերած պաշտպանութիւններն ու Հայոց ցեղասպանութեան ճանաչումը:

Պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը ներկաներին վրստահեցրեց, որ Իրանում միաստուածեան կրօնների հետեւորդների եւ տարբեր ազգերի միջեւ գոյութիւն ունի խաղաղ գոյակցութիւն եւ մշակութային յարաբերութիւնների զարգացում: Շարունակութեան մէջ պրն. Վրէժը մատնանշեց, որ Իրանի պետութիւնը ոչ մի ջանք չի խնայում պահպանելու եւ նորոգելու հայերի համար մշակութային արժէք ներկայացնող կառոյցները եւ մեծ բիւդջէներ է տրամադրում այդ աշխատանքներին,

մինչդեռ որոշ հարեւան երկրներում ամբողջութեամբ աւերում եւ քանդում են դրանք եւ այս հարցը պէտք է միջազգային համագումարների եւ պատկան հաստատութիւնների ուշադրութեան լուրջ առարկայ դառնայ:

Այնուհետեւ նախարար Սեբաստիան Կուրցը հետաքրքրուեց, թէ իրանահայերն ինչ կարծիք ունեն Իրանի եւ հնգեակի միջեւ ատոմային համաձայնութեան ուղղութեամբ, ինչ փոփոխութիւններ են ակնկալում ապագայի համար եւ դրանք ինչպէս են ազդելու իրանահայութեան կեանքի վրայ: Նախարարը նաեւ հարցումներ ուղղեց Իրանում մարդկային իրաւունքների պաշտպանութեան ուղղութեամբ եւ այն, որ՝ ըստ իրենց տեղեկութիւնների, Իրանի երիտասարդների դժուարութիւններից ամենակարեւորն անգործութիւնն է, որի լուծման համար երիտասարդները լքում են երկիրը եւ այլ երկրներ մեկնում աշխատելու:

Ի պատասխան վերոնշեալ հարցադրումների, հոգշ. Հայր Անանիան եւ Թեմական խորհրի ատենապետը բացատրեցին, թէ բնականաբար ատոմային համաձայնութիւնը եւ դրա արդիւնքում սահմանափակումների չեղեալ յայտարարուելը դրական ազդեցութիւն են ունենալու հասարակական եւ տնտեսական ոլորտներում եւ հայերն եւս իբրեւ Իրանի համահաւասար քաղաքացիներ զերծ չեն մնալու այդ դրական փոփոխութիւններից: Իսկ Մարդկային իրաւունքներին կապուած խնդիրները օտարերկրացիների մօտ խիստ չափազանցուած է ներկայացուած, մինչդեռ իրականում պատկերն այլ կերպ է: Անգործութեան եւ երիտասարդութեան խնդրով նշուեց, որ թէեւ տոկոսային առումով անգործութիւնը բարձր է գնահատւում Իրանում, սակայն դա համաշխարհային խնդիր է եւ Իրանի երիտասարդութիւնը ոչ թէ այդ պատճառով է թողնում երկիրը եւ արտագաղթում, այլ արեւմտեան կեանքից նրանց ունեցած շատ յաճախ ոչիրական պատկերացումների ու տպաւորութիւնների պատճառով:

Վերջում երկու կողմերը միմեանց նուիրեցին յուշանուէրներ: Հանդիպումից յետոյ նախարարն այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի:

ՖԻՆԼԱՆԴԱՅԻ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔՆՈՐԴԱՐԱՆ

Երկուշաբթի՝ 2015 թւականի սեպտեմբերի 21-ի յետմիջօրէի ժամը 3:00-ին, Ս. Ամենափրկչեան վանք մուտք գործեցին Ֆինլանդիայի արտաքին գործոց նախարարութիւնում Ռուսիոյ, Արեւելեան Եւրոպայի եւ Միջին Ասիայի բաժանմունքի ընդհանուր տնօրէն Թերհի Հաքալան, Իրանի իսլամական հանրապետութիւնում Ֆինլանդիայի դեսպան Հարի Քամառայնենը իրենց ընկերակցող պատուիրակութեան հետ:

Հիւրերին դիմաւորեցին Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Սպահանի

հայոց թեմի Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչները:

Հոգշ. Հայր Սուրբը, ողջոյնի խօսքեր արտասանելուց յետոյ, պատուիրակութեան անդամներին ներկայացրեց Սպահանի հայոց թեմի ընդհանուր պատկերը եւ Ազգային առաջնորդարանի գործունէութեան վերաբերեալ համապարփակ տեղեկութիւններ փոխանցեց: Նա իր խօսքերի մէջ յիշեցրեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 24-ամեակի մասին, միաժամանակ անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին եւ այն փաստին, որ Ֆինլանդիան տակաւին պաշտօնական կեցուածք չի ցուցաբերել այդ կապակցութեամբ, դեսպանի կարծիքը ցանկացաւ այդ մասին:

Տկն. Թերհի Հաքալան իր հերթին շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար, շնորհաւորեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տարեդարձի առիթով, իսկ Հայոց ցեղասպանութեան կապակցութեամբ յայտնեց, որ իր երկրի պետութիւնը յարգանքով է վերաբերւում այդ արհաւիրքի նահատակների յիշատակին եւ պաշտօնական ճանաչման համար գործողութիւններ են ծաւալուած եւ աշխատանքներ են տարուում:

Հանդիպումից յետոյ, պատուիրակութիւնն այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ Խաչատուր Կեսարացու անուան թանգարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ 24-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆԻՒՐԻԱԾ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Հայ ժողովրդի միասնական կամքի արտացոլման եւ հայրենիքում ազատ ապրելու ցանկութեան իրականացման տօնի՝ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-ամեակի առթիւ, չորեքշաբթի՝ սեպտեմբերի 23-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզասրահում, Նոր Ջուղայի եւ Ճահինշահրի հայ համայնքի անդամների մասնակցութեամբ տեղի ունեցաւ հանդիսաւոր տօնակատարութիւն:

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ կազմակերպուած այս միջոցառմանը ներկայ էին նաեւ թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, Իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Արտաշէս Թումանեանը, դեսպանատան պաշտօնատարներ, Ճահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քահանայից դասը եւ ազգային մարմինների ու շրջանի Հայ Դատի յանձնախմբի անդամներ:

Տօնակատարութիւնն սկիզբ առաւ Իրանի Իսլամական եւ Հայաստանի Հանրապետութիւնների հիմների յոտնկայս ունկնդրութեամբ, որից յետոյ երեկոյի հանդիսավար Մանիա Ղուկասեանը շնորհաւորանքի խօսք ուղղելով պանծալի առիթի կապակցութեամբ, անկախութեան ձեռքբերումը հայ ժողովրդի համար շրջադարձային իրա-

դարձութիւն համարեց եւ նշեց, որ այն իրականացուել է ժողովրդի մեծ զոհողութիւնների շնորհիւ:

Այնուհետեւ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի խօսքն ընթերցեց նոյն խորհրդի անդամ Քառոլին Դիլանչեանը, որտեղ ասուած էր. «*Մեր ժողովուրդը միշտ իր ուղենիշն ունենալով անկախութեան բացարձակ արժէք լինելու գաղափարը, փաստել է, որ յանուն այդ արժէքի պատրաստ է բարձրագոյն զոհաբերութիւնների՝ յաղթահարելով լուրջ դժուարութիւններ։ Համոզուած ենք՝ արդար, ժողովրդավար եւ օրրաստօրէ հզօրացող պետութիւն ունենալը կախուած է Հայաստանի թէ Սփիւռքի իւրաքանչիւր հայի կատարած ներդրումից ու աշխատանքից։ Ուստի այսօր վերագնահատելով մեր անցած ուղին եւ սերտելով պատմութեան կարեւոր դասերը, պիտի փորձենք առաջնորդուել միայն համազգային շահերով եւ միասնականօրէն քայլել մեր ազգային իդէալների ուղղութեամբ*»: Պատգամի աւարտին Թեմական խորհուրդը շնորհաւորելով առիթի կապակցութեամբ՝ հայ ժողովրդին մաղթեց արդիւնաւէտ աշխատանք յանուն հայրենիքի բարգաւաճման ու զարգացման:

Ելոյթների շարանում արտայայտուեց Իրանում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Արտաշէս Թումանեանը, ով սկզբում շնորհաւորելով Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 24-րդ տարեդարձի կապակցութեամբ, ասաց. «*Թէեւ 24 տարիները պատմութեան տեսակէտից մեծ ժամանակաշրջան չեն համարւում, սակայն նշուած ժամանակահատուածն իր պատմական խտացուածութեամբ, իրադարձութիւնների բազմազանութեամբ ու բազմաբարդութեամբ 100 ամեակների հաւասար արժէք կարող է ունենալ ցանկացած ազգի համար*»: Այնուհետեւ նա թւարկելով վերանկախացումից յետոյ Հայաստանի առջեւ ծառացած դժուարութիւնները, ինչպիսին են՝ երկրաշարժի հետեւանքները, պատերազմը, տրանսպորտային եւ էներգետիկ շրջափակումները, աղքատութիւնը, կորուստներն ու զոհերը, յայտարարեց, որ այդ դժուարութիւնների մեծամասնութիւնը յաղթահարուել են:



Յարգելի դեսպանը մատնանշելով անցնող տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետութեան մի շարք ձեռքբերումները՝ Մ.Ա.Կ.-ի լիիրաւ անդամ դառնալը եւ կայացած պետութիւն ու մարտունակ բանակ ունենալը, կոչ արեց գիտակցել, թէ մեր ապագայի ճակատագրի ճարտարապետը, նախագծողն ու կերտողը Հայաստանն ու հայ ժողովուրդն են: Նա դժուարութիւնների համար ուրիշներին մեղադրելը պարտութիւն համարելով, ընդգծեց, որ իշխանութեան ու ժողովրդի հաւաքական ջանքերի շնորհիւ խնդիրները յաղթահարուելու են:

Երեկոյի պաշտօնական բաժինը եզրափակուեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի հայրական պատգամով: Սրբազան Հայրն իր խօսքում կարեւորութեամբ նշելով, որ հայ ժողովրդի կեանքում ազգային եւ հոգեւոր գանձ ու արժէք են համարւում իր լեզուն, հայրենիքը, եկեղեցին եւ մշակոյթը, ներկաներին յորդորեց Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-րդ տարեդարձի առթիւ իրենց ուխտը վերանորոգելով՝ իրենց սիրտը դնել իս-

կական գանձի՝ ազատ եւ անկախ Հայաստանի վրայ, քանի որ դա է հայ ժողովրդի ու եկեղեցու գոյատեւման եւ հզօրացման գրաւականը:

Թեմական առաջնորդն իր խօսքի շարունակութեան մէջ կոչ ուղղեց հայ ժողովրդի զաւակներին՝ դժուարութիւններից ու նեղութիւններից չյուսահատուել, հայրենի հողը չլքել եւ կառչած մնալով սրբազան հողին, այն պաշտպանել արժանապատուութեամբ, յարգանքով, սիրով ու նւիրումով:

Վերջում Սրբազան Հայրը շնորհաւորելով առիթի կապակցութեամբ՝ մաղթեց, որ Հայաստանի պետականութիւնն ու բանակը օրըստօրէ առաւել զօրանան եւ հայ ժողովուրդը գոյատեւի ու ստեղծագործի:

Երեկոյի պաշտօնական բաժնին յաջորդեց գեղարուեստական ծրագիրը, որտեղ ազգային, յեղափոխական եւ ժողովրդական երգերի կատարմամբ մտերմիկ ու խանդավառ մթնոլորտ ստեղծեց Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր արտիստ Արսէն Գրիգորեանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՊԱՀԱՆԻ ԵՒ ԻՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՋԵՀԱԴԻԻ ՀԵՏ

Շաբաթ՝ 2015 թւականի հոկտեմբերի 4-ին, սրբազան պաշտպանութեան շաբաթւայ առթիւ, Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի գլխաւորութեամբ, Պատգամաւորական ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների ներկայացուցիչներից եւ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում նահատակւած հայ զինւորների ընտանիքների անդամներից բաղկացած պատւիրակութիւնը, Սպահանի թնդանօթային զօրանոցի հրամանատարութեան գրասենեակում հանդիպում ունեցաւ Սպահան, Եազդ եւ Չհարմահալ նահանգների բանակի ընդհանուր հրամանատար Ռեզա Ջեհադիի, զինւորական բարձրաստիճան հրամանատարների եւ հոգեւորականների հետ:

Հանդիպման ընթացքում երկուստեք շնորհաւորանքներ փոխանցւեցին սրբազան պաշտպանութեան շաբաթւայ առթիւ:

Հանդիպման սկզբում, գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը շնորհակալութիւն յայտնեց հրամանատար Ջեհադիին, ով ամէն տարի ջերմօրէն ընդունում է ազգային իշխանութեան պատասխանատուներին եւ յոյս յայտնեց, որ այս սերտ յարաբերութիւնն օր ըստ օրէ ամրանալու է: Թեմական առաջնորդն իր խօսքերի մէջ ուժ ու կորով մաղթեց բոլոր բանակայիններին, ովքեր երկրի խաղաղութեան եւ անսասանութեան երաշխաւորողներն են: Գերշ. Սրբազան Հայրը միաժամանակ իր, ազգային իշխանութեան եւ հայ համայնքի անունից ցաւակցութիւն յայտնեց Սաուդական Արաբիայում Հաջջի տարեկան ուխտագնացութեան ընթացքում տեղի ունեցած աղէտի կապակցութեամբ, որի հետեւանքով բազմահարիւր իրանցի ուխտաւորներ են զոհւել եւ անհետացել: Նա դատապարտելով Սաուդական Արաբիայի իշխանութեան անկազմակերպւածութիւնն ու թերացումները՝ ուխտաւորների անվտանգութիւնն ապահովելու ուղղութեամբ, յիշեցրեց, որ հայ ազգն իբրեւ բազում աղէտների միջից անցած ժողովուրդ, լաւապէս

զգում է վշտի ու ողբի ծանրութիւնը եւ խորապէս սգում է տեղի ունեցած ողբերգութիւնը:

Բանակի հրամանատար՝ Ռեզա Զեհադին, շնորհակալութիւն եւ ուրախութիւն յայտնելով պատուիրակութեան եւ յատկապէս նահատակների ընտանիքների այցի կապակցութեամբ, գնահատեց հայ ժողովրդի կատարած զոհողութիւններն ու նուիրումը Իսլամական յեղափոխութիւնից յետոյ երկրի ամբողջականութեան, գերիշխանութեան եւ անսասանութեան համար տեղի ունեցած բոլոր իրադարձութիւններում, եւ յատուկ շնորհակալութիւն ու երախտագիտութիւն յայտնեց նահատակների հարազատներին:

Շարունակութեան մէջ արտայայտուեց Սպահանի հայոց թեմի հայ նահատակների եւ անձնուրացների խնդրով ազգային իշխանութեան կողմից նշանակուած պատասխանատու՝ պրն. Վահէ Թորոսեանը, ով դիմելով բանակի հրամանատար՝ Զեհադիին, առաջարկեց Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում հայ նահատակների համար կազմակերպել յուշահանդէս՝ կարեւորելով յիշեալի ներկայութիւնն այդ ծրագրում: Հրամանատար Զեհադին ուրախութեամբ ընդառաջեց առաջարկին եւ խոստացաւ յառաջիկայում իրագործել այն:

Վերջում գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առիթով խորհրդանիշ անմոռուկի կրծքանշան յանձնեց հրամանատար Զեհադիին:

Հիւրասիրելուց յետոյ, զօրանոցի հրամանատարութեան գրասենեակի առջեւ հաւաքական լուսանկարուելով աւարտուեց հանդիպումը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Շաբաթ, սեպտեմբերի 5-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Գէորգ եկեղեցում տեղի ունեցած կիրակնամուտի ժամերգութեան աւարտին, արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի միջոցով ընթերցուեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի պատգամը՝ ուղղուած հայ ժողովրդին: Սոյն պատգամը Վեհափառ Հայրապետի թելադրանքով, օգոստոսի 22-ին, ընթերցուել էր Սիսի կաթողիկոսարանի մայրավանքի աւերակներում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններից կազմուած պատուիրակութեան միջոցով:

100 տարիներ անց Սիսի փլատակներում հնչած հայրապետական այս պատգամը անդրադառնալով Հայոց Ցեղասպանութեան 1.5 միլիոն անմեղ զոհերին եւ այդ շրջագծում հայ եկեղեցու կորուստներին ու կրած նիւթա-բարոյական ահռելի վնասներին՝ պահանջում էր Սիսի դարաւոր կաթողիկոսարանի վերադարձը եւ վերահաստատում էր հայ ժողովրդի արդար պահանջատիրութիւնը:

Արարողութեանը ներկայ էին՝ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, դպրաց դասը, ազգային մարմինների ներկայացուցիչները եւ հաւատացեալ ժողովուրդ:

Ս. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԸ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՆՇԻԵՑ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ուրբաթ՝ սեպտեմբերի 25-ի կէսօրից յետոյ ժամը 3-ին, Ս. Գէորգ զօրավարի նախատօնակին, Նոր Զուղայի համանուն եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասի ու հաւատացեալ ժողովրդի տեղի ունեցաւ աղօրհնէք եւ ոչխարների զենում:

Սրբազան Հայրն աղօրհնէքից յետոյ աղօթեց առ Բարձրեալն Աստուած, որ բոլոր ուխտաւորների փափագն իրականացնի եւ հիւանդներին առողջութիւն պարգեւի: Այնուհետեւ նա ներկաներին ուղղուած իր պատգամում ասաց. «*Երբ նոր օրհնուած միւռոնով օրհնուած ջուրը խմենք եւ մատաղը ճաշակենք, պիտի կարողանանք մաքրուել, սրբուել, նորոգուել եւ Տիրոջ ներկայութիւնն զգալով՝ աստուածահաճոյ կեանք ապրել*»:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ տեղի ունեցաւ հսկումի արարողութիւն: Իսկ ուխտաւորները իրենց խորհուրդը կատարեցին մատաղացուներ նուիրաբերելով եւ դրամական նուիրատուութիւններով:

Շաբաթ՝ սեպտեմբերի 26-ի առաւօտեան ժամը 9-ին, թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի ձեռամբ եւ Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ու թեմիս քահանայից եւ դպրաց դասերի մասնակցութեամբ սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Ս. Գէորգ զօրավարի տօնի առթիւ, ուր նշուեց նաեւ Ս. Գէորգ եկեղեցու անուանակոչութեան տօնը:

Յընթացս եպիսկոպոսական հանդիսաւոր Պատարագի, Սրբազան Հայրը հաւատացեալներին փոխանցեց իր պատգամը՝ աւետարանական հետեւեալ խօսքով՝ «*Մի վախեցէ՛ք նրանցից, որոնք կարող են ձեր մարմինը սպանել։ Վախեցէ՛ք Աստծուց, որ սպանելուց յետոյ կարող է դժոխք գցել ձեզ*»։ Ապա իր պատգամի շարունակութեան մէջ թեմական առաջնորդն ասաց. «*Այս նախադասութիւնը բոլոր սուրբերի կեանքի նշանաբանն է դարձել։ Մեր սուրբերը երբեք չեն վախեցել, երբ իրենց մարմիններին վտանգ է սպառնացել, երբէք չեն վախեցել նրանցից, ովքեր կարողացել են իրենց մարմիններն սպանել։ Վկայ մեր ժողովրդի պատմութիւնը։ Մեր ժողովուրդը դեռ դարեր շարունակ նոյն նշանաբանով ու հոգով ապրել եւ պայքարել է։ Նրանցից մէկն էր Ս. Գէորգ զօրավարը*»։ Այնուհետեւ Սրբազան Հայրն ակնարկ ունենալով զօրավարի կեանքին՝ ժողովրդին յորդորեց քայլել նրա ճանապարհով՝ հաւատալով ու ընդունելով Յիսուս Քրիստոսին՝ որպէս Աստծու Որդի:

Վերջում գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը շնորհաւորանքի խօսք ուղղելով եկեղեցու անուանակոչութեան

կապակցութեամբ՝ գնահատեց թեմի հոգեւորականաց դասին, Կրօնական խորհրդին, Նոր Ջուղայի հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեանը, հարիսայի պատրաստման յանձնախմբին, կանանց յանձնախմբերին, նուիրատուներին եւ բոլոր նրանց ովքեր աջակից են եղել տօնի պատշաճ կազմակերպման գործում:

Պատարագից յետոյ տեղի ունեցաւ ջրօրհնէքի արարողութիւն, որը կատարուեց Ս. Գէորգ զօրավարի աջի օրհնութեամբ եւ շաղախուեց Անթիլիասում վերջերս օրհնուած միւռոնով:

Այնուհետեւ երգեցիկ խմբի եւ հոգեւորականաց դասի կազմած թափօրի ուղեկցութեամբ Սրբազան Հայրն այցելեց եկեղեցու բակ, որտեղ մատաղօրհնէքի արարողութեամբ օրհնեց Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ եւ հարիսայի յանձնախմբի միջոցով պատրաստուած հարիսան եւ բաժանեց հաւատացեալների միջեւ:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ԻՐԱՆ-ԻՐԱՔ ՊԱՐՏԱԴՐԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կիրակի՝ սեպտեմբերի 27-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի եւ ձեռամբ արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի, կիրակնօրեայ սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց, ուր նշեց նաեւ հայ ժողովրդին պատկանող խաչի տօներից՝ Վարագայ Ս. Խաչի տօնը: Ս. Պատարագի աւարտին թեմի Կրօնական խորհրդի նախաձեռնութեամբ, թեմական առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, Սրբազան պաշտպանութեան շաբաթայ առթիւ Հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ՝ Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի տարիներում Իրանի հողային ամբողջականութեան ճամբին իրենց կեանքը նուիրաբերած նահատակների հոգիների խաղաղութեան համար: Արարողութեան ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Ս. Պատարագի ընթացքում գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին: Նա իր քարոզն սկսեց Պօղոս առաքեալի «*Քաւ լիցի որ ես ուրիշ բանով պարծենամ, բացի Քրիստոսի սուրբ խաչից*» խօսքով, ապա անդրադարձաւ Վարագայ Ս. Խաչի տօնին եւ նշելով, որ Քրիստոսի խաչելութիւնից առաջ ոչ ոք չէր պարծենում խաչով՝ այն ամենաանարգ մահուան միջոց համարելով, աւելացրեց. «*Քրիստոսի խաչելութեամբ խաչը տարբեր խորհուրդներ ստացաւ եւ սրբագործելով դարձաւ զոհողութեան, նուիրումի, սիրոյ եւ պաշտպանութեան խորհրդանիշ: Խաչի վրայ Քրիստոսն իր արիւնը թափեց՝ ամբողջ մարդկութեան մեղքերը մաքրելու եւ սրբելու համար... Այսօր խաչը ոչ միայն պարծանք է Պօղոս առաքեալի համար, այլեւ պարծանք է մեզանից իւրաքանչիւրի համար, քանի որ Խաչեալը մեր փրկութեան համար Իր կեանքը զոհեց*»:

Սրբազան Հայրը յիշելով Իրանի հողային ամբողջականութեան պաշտպանութեան համար նահատակուածներին, աղօթեց Բարձրեալին նրանց հոգիներին խաղաղութիւն պարգեւի, ապա յիշելով յատկապէս նոյն ճանապարհին զոհուած հայ նահատակներին՝ որպէս նուիրումի եւ զոհողութեան խորհրդանիշ, ասաց. «*Նրանք երկար կեանք չունեցան, սակայն այդ կարճ կեանքի ընթացքում մեծ դաս տուեցին իրենց յաջորդող սերունդներին, որ ապրել Խաչեալի օրինակով եւ անգամ սեփական կեանքը զոհել՝ հողն արժանապատուութեամբ պաշտպանելու համար*»:

Թեմական առաջնորդն իր քարոզի աւարտին աղօթեց Աստծուն եւ իր խաչեալ Որդուն, որ նահատակների հոգիները լուսաւորի եւ նրանց հարազատներին Սուրբ Հոգով մխիթարի:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Շաբաթ՝ հոկտեմբերի 10-ի առաւօտեան, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Սրբոց Թարգմանչաց տօնի առթիւ՝ նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի եւ ձեռամբ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանի: Պատարագին մասնակցում էին նաեւ Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, թեմիս քահանայից ու դպրաց դասերը եւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը, որը հանդէս եկաւ շարականների երգեցողութեամբ՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Հոգեպարար Պատարագին ներկայ էին ազգային մարմինների ներկայացուցիչները, թեմի հաւատացեալ ժողովուրդը եւ հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնը՝ ընկերակցութեամբ պատկան տեսչական եւ ուսուցչական կազմերի ու ծնողական խորհուրդների:

Եկեղեցական արարողութեան աւարտին ներկաները համախմբուեցին Ս.Ա. վանքի Խաչատուր Կեսարացու անուան թանգարանի մուտքի առջեւ՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Խաչատուր վրդ. Կեսարացու կիսանդրիների մօտ, ուր իրականացուեց աշակերտական գեղարուեստական ծրագիր: Սկզբում Հայ մշակոյթի եւ ուսուցչական տօնների առթիւ ներկաներին շնորհաւորանքի խօսք ուղղեց Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի գրասենեակի պատասխանատու Մադլէն Ղարիբեանը, ով ստանձնել էր նաեւ այս գողտրիկ միջոցառման հաղորդավարութիւնը:

Այնուհետեւ ծրագրում հերթաբար ելոյթ ունեցան հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնը:

Սկզբում հայ ուսուցչին եւ դպրոցին նուիրուած արտասանութեամբ ու երգով ելոյթ ունեցան Նոր Ջուղայի հայոց ազգային նախակրթարանի սաները, ապա «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի 4-րդ եւ 5-րդ դասարանների աշակերտութեան միջոցով կատարուեցին «Դու միշտ ուսուցիչ» ու «Մայրենի լեզու» երգերը եւ արտասանուեցին օրուան պատշաճ խօսքեր, իսկ որպէս եզրափակում Սուրէն Մելիքեանի «Հայոց Այբուբէն» բանաստեղծութիւնը հնչեց Նարէ Ղարախանեանի, Հայուհի Ղարախանեանի, Լիանա Ղազարեանի եւ Արփինէ Մովսիսեանի շուրթերից:

Երգչախմբին անդամակցում էին՝ Անի Մինասեանը, Անի Ղազարեանը, Սելին Մարուքեանը, Սիսիան Մարկոսեանը, Լիանա Ղազարեանը, Սիսիան Քալանթար Օհանեանը, Թենի Ծատուրեանը եւ Արփինէ Մովսիսեանը: Խօսքերն արտասանեցին Ադրիան Մինաս Խաչիկեանը, Նարէ Յակոբեանը, Ժանօ Շահիջանեանը, Ալէն Ղեւոնդեանը, Մորենա Դաւթեանը, Մեղրի Փանոսեանը, Փաթրիկ Ակոնը եւ Վանայ Յակոբ Զաքրեանը:

Յանուն «Քանանեան» միջնակարգ աղջկանց դպրոցի Պարոյր Սեւակի «Մայրենի լեզու» բանաստեղծութիւնը աստուածքեցին Արփա Մարգարեանը եւ Վանէ Յարութիւնեանը: «Կատարինեան» միջնակարգ տղա-

յոց դպրոցի կողմից, առիթին առնչող խօսքն ընթերցեց Վահագն Հայրապետեանը, իսկ Վանանդ Իսաղուլեանն ասմունքեց Վարանդի «Հայոց լեզու» բանաստեղծութիւնը:

Գեղեցիկ մտայղացմամբ գնահատեցին եւ յուշանուէրներով պարգեւատրեցին դպրոցների եւ Ս. Ա. վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանների ամենաընթերցասէր աշակերտ-անդամները:

Որպէս ամենաընթերցասէր աշակերտ՝ «Արմէն» տարրական կրթահամալիրի գրադարանավարուհի Այիդա Ալեքսանդրեանը ներկայացրեց Յասմիկ Տէր-Մարտիրոսեանին ու Ալէն Ղեւոնդեանին, «Քանանեան» եւ «Կատարինեան» միջնակարգ դպրոցների գրադարանավարուհի Կարին Տէր-Մարտիրոսեանը՝ Տաթեւիկ Տէր-Մարտիրոսեանին, Վանէ Օրոջեանին, Մենուա Քեշիշեանին եւ Նժդեհ Սիմոնեանին, իսկ «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի պատասխանատու Վերգինէ Միրզախանեանը՝ Էդրին Թորոսեանին, Անայիս Բաբայեանին, Մելին Թորոսեանին, Լիլիթա Յովսէփեանին, Արփինէ Մովսիսեանին եւ Նինէ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ամենաընթերցասէր աշակերտներն են Հայբերդ Մատթէոսեանն ու Ռենիտա Նազարեանը:

Ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը: Գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը Թարգմանչաց տօնը ազգային-եկեղեցական, լեզուի ու մշակոյթի եւ մեր հոգեւոր վերածնունդի տօնը համարելով, ասաց. «*Եթէ չլինէին մեր առաջին ուսուցիչները, մենք այսօր դպրոցում հայերէն չէինք սովորելու եւ գանձեր չէինք ունենալու։ Մեսրոպ Մաշտոցը սովորական մարդ չէր։ Նա իր ազգի գոյատեւման ու ինքնութեան պահպանման մասին մտածելով էր, որ ստեղծեց հայերէն տառերը*»։

Թեմական առաջնորդն իր խօսքի մի այլ բաժնում աշակերտներին յորդորելով, որ անաղարտ պահեն եւ լաւ սովորեն հայ լեզուն ու մշակոյթը, կոչ ուղղեց՝ իրենց հպարտ զգալ հայ լինելու եւ Մեսրոպ Մաշտոցի ժառանգորդները կոչուելու համար: Սրբազան Հայրը վերջում շնորհաւորելով Ս. Թարգմանչաց վարդապետների եւ հայ ուսուցչի տօնի առթիւ, ծրագիրը եզրափակեց «Պահպանիչ» աղօթքով:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ, ՁԵՌԱՄԲ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻ

Շաբաթ՝ 2015 թւականի հոկտեմբերի 31-ի յետմիջօրէի ժամը 5:30-ին, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում տեղի ունեցաւ Կիրակնամուտքի արարողութիւն նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի: Ներկայ էին հոգեւորականաց ու դպրաց դասերը, արարողութեան երգեցողութիւնը կատարում էր Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախումբը ղեկավարութեամբ խմբավար Համիկ Ալեքսանդրեանի: Եկեղեցին առլեցուն էր հաւատացեալներով:

Յաւարտ Երեկոյեան ժամերգութեան, թեմական առաջնորդը եկեղեցու դասի կենտրոնում՝ Ատեանի առջեւ գահ բազմեց՝ կատարելու Համլետ սրկ. Մինասեանի քահանայական ձեռնադրութեան Կոչման արարողութիւնը: Վերջինս իր խարտաւիլակի՝ Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ուղեկցութեամբ, եկեղեցու արեւմտեան մուտքի առջեւից ծունկի եկած սաղմոսների եւ շարականների երգեցողութեամբ քայլ առ քայլ առաջնորդուեց դէպի ձեռնադրիչ Սրբազան Հայրը եւ Կոչման արարողակարգի համաձայն պատասխանելով թեմական առաջնորդի հարցադրումներին հրաժարուելով նզովեց բոլոր հերետիկոսների եւ հերձուածողների մոլար վարդապետութիւնները, ապա դաւանեց ուղղափառ հաւատի եւ սուրբ Հայրերի ճշմարիտ ու վաւերական ուսուցումները, եւ խոստացաւ հաւատարմօրէն հետեւել դրանց եւ ծառայել Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցուն:

Կոչման կարգից յետոյ, թեմական առաջնորդը քահանայի պարտականութիւնների եւ այդ պաշտօնի վեհութեան ու առանձնայատկութիւնների մասին քարոզելով՝ յորդորեց Համլետ սարկաւագին քաջ եւ արիասիրտ հովիւ դառնալու, Քրիստոսի սիրով լցւած եւ իր ապագայ հօտի արժանի ծառան ու հոգեւոր կարիքները մատակարարող հոգեւորական լինելու գիտակցութեամբ պատրաստուի վաղուայ ձեռնադրութեան արարողութեանը: Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն իր հայրական խրատականը տալով՝ շեշտեց առանց ձանձրանալու, յարատեւ եւ նուիրումով աշխատելու եւ ծառայելու կարեւորութեանը, որով հոգեւորականը կարող է իր կոչմանն արժանի վարք ու վաստակ ապահովել:

Յաջորդ օրը՝ կիրակի՝ նոյեմբերի 1-ի առաւօտեան, Ս. Ստեփանոս եկեղեցում տեղի ունեցաւ եպիսկոպոսական սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագիչ Սրբազան Հայրը կատարեց քահանայական ձեռնադրութեան խորհուրդը՝ նորընծային վերանուանելով Տ. Սահակ քահանայ: Ներկայ էին հոգեւորականաց եւ դպրաց դասերը, Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Արմէն Ամիրխանեանի, իսկ հաւատացեալներն իրենց խիտ շարքերով պայծառացրել էին եկեղեցին:

Ընծայեալը եկեղեցու դասից, խարտաւիլակ հոգշ. Հայր Սուրբի եւ քահանայ հայրերի ուղեկցութեամբ ծունկի եկած Ս. Խորան բարձրացաւ, որտեղ պատարագիչ Սրբազան Հայրը աղօթքներով եւ մաղթանքներով կատարեց Ձեռնադրութեան խորհուրդը՝ նորընծայ Տ. Սահակ քհնյ. Մինասեանին շնորհելով հոգեւորականի զգեստ կրելու, Հայաստանեայց եկեղեցու սուրբ խորհուրդները կատարելու եւ հաւատացեալ ժողովրդի հո-

գեւոր կարիքները մատակարարելու իշխանութիւն՝ սրբալոյս Միւռոնով օծելով նրա ճակատն ու ձեռքերը, որից յետոյ արժն. Քահանայ Հայրն իր առաջին խաղաղութիւնը փոխանցեց ներկայ հաւատացեալներին:

Քարոզի պահին, գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանն անդրադառնալով Ձեռնադրութեան խորհրդի պահին ընթերցւած աղօթքների իմաստին, անշահախնդիր սպասարկութիւնը, նւիրումը, ճշմարտութեան քարոզչութիւնը համարեց արժանի հոգեւորական դառնալու տեսլներից եւ աստուածային շնորհք ու զօրութիւն հայցեց նորընծայ Քահանայ Հօր համար եւ յորդորեց նրան՝ իր կեանքով ու գործով օրինակ հանդիսանալ իր հօտին: Առաջնորդ Սրբազան Հայրը նորընծայ քահանային թելադրեց՝ իր ապագայ գործունէութեան ընթացքում իր հաւատը կենդանի վկայութեան վերածել, մնայուն ծառայութեան դիրքի մէջ լինել եւ իբրեւ ճշմարիտ ու վաւերական հովւի կեցւածք՝ հաւատարիմ մնալ իր կոչումին՝ Աստծու խօսքը տարածելու եւ ուսուցանելու առաքելութեանը, առանց որի ձախողելու է հոգեւորականը:

Յուզիչ էր պատարագիչ Սրբազան Հօր քարոզի այն բաժինը, որտեղ նա բացատրեց նորընծային «Սահակ» անունով վերանւանելու պատճառը. թեմական առաջնորդն անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, յիշեց Մեծ եղեռնի առաջին հոգեւորական նահատակին՝ Սահակ Ծ. վրդ. Օտապաշեանին, որի անունով կոչելով նորընծայ Քահանայ Հօրը՝ նրա համար մեծ պատասխանատուութիւն եւ պարտականութիւն համարեց այդ անւանը վայել վաստակ մշակելը իր ծառայական կեանքի մէջ: Գերշ. Սրբազան Հայրը մեծ յուզումով յայտնեց, որ նոյն այս քարոզի պահին ինքն իր վզին կրում է Սահակ Ծ. վրդ. Օտապաշեանի վարդապետական խաչը:

Պատարագիչ Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց պրն. Յուսան Դեհիբաշեանին, ով յօժար կամքով եւ ուրախութեամբ ստանձնել էր նորընծայ Քահանայ Հօր ձեռնադրութեան կնքահայրի պաշտօնը:

Ս. Պատարագի եւ ձեռնադրութեան խորհուրդների կատարումից յետոյ, Ս. Ստեփանոս եկեղեցու շրջափակում, ի պատիւ նորընծայ քահանայի, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որի ընթացքում խօսքեր եւ բարեմաղթանքներ հնչեցին Եկեղեցեաց վարչութեան եւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի միջոցով: Շնորհակալական խօսքերով հանդէս եկաւ նորընծայ Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, ապա հայրական խօսքով ու խրատականով ծրագիրն եզրափակեց թեմական առաջնորդը՝ շնորհաւորելով ազգային մարմիններին, քահանայից դասին եւ առհասարակ ողջ ժողովրդին:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄԵԾՐԱՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 12-ի երեկոյեան, Նոր Ջուղայի հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի եւ ներկայութեամբ թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի, Պատգամաւորական Ժողովի Դիւանի, Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների անդամների, Շահինշահրի հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչների, Նոր Ջուղայի եւ Շահինշահրի հայոց դպրոցների հանգստի կոչած ու աշխատող հայ տեսուչների եւ ուսուցիչների ու մի շարք այլ հրաւիրեալների, հայ ուսուցչի տօնի առթիւ եւ մասնաւորապէս կրթութեան ու լուսաւորութեան մշակներին մեծարելու նպատակով տեղի ունեցաւ հանդիսաւոր երեկոյթ:

Միջոցառման մեկնարկը տրուեց օրուայ հանդիսավար, Կրթական խորհրդի անդամուհի Ադրինէ Ստեփանեանի շնորհաւորանքի խօսքով եւ հայ ուսուցչին նուիրուած մաղթանքներով, ապա արտայայտուեց նոյն խորհրդի ատենապետ Սաթօ Աւետումեանը: Նա ընդգծեց. «*Ոսկեդարից մինչեւ այսօր հայ ուսուցիչը հաւատարիմ է առաջին ուսուցիչ Ս. Մեսրոպ Մաշտոցի պատգամին։ Անգնահատելի է ուսուցչի դերը եւ անփոխարինելի է նրա առաքելութիւնը կրթութեան ոլորտում։ Նրանց շնորհիւ մենք մուտք ենք գործում գիտութեան հարուստ գանձարան եւ գտնում գիտելիքների մի ամբողջ պաշար։ Ուսուցիչն ազգային արժէք է, իսկ ուսուցչութիւնը՝ կոչում*»։ Տկն. Աւետումեանը յարգանքի խօսք ուղղեց վերջերս մեզանից առյաւէտ հեռացած վաստակաւոր ուսուցիչներ՝ Ժերմէն Բաբայեանի եւ Էլիրա Ղազարեանի յիշատակին, ապա շնորհաւորելով հայ ուսուցչին՝ իր տօնի կապակցութեամբ, նրանց անսպառ ուժ ու եռանդ մաղթեց՝ սերունդներ դաստիարակելու գործում:

Այնուհետեւ գրքերի տեսքով ձեւաւորուած կարկանդակը հատուեց նախորդ ուսումնական տարեշրջանի ընթացքում հանգստի կոչուած ուսուցիչներ՝ Վարուժ Մովսիսեանի ու Զանի Թահմազեանի միջոցով, որից յետոյ յիշեալներն իրենց պատուգրերն ստացան թեմական առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ:

Յաջորդիւ Թեմական խորհրդի անունից արտայայտուեց խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը: Նա շնորհաւորանքի խօսք ուղղեց մշակոյթի օրուայ եւ ուսուցչի տօնի կապակցութեամբ, ապա շեշտելով մատաղ սերնդի կրթութեան եւ դաստիարակութեան գործում ուսուցչի առաքելութիւնը, կարեւորութեամբ անդրադարձաւ սփիւռքեան պայմաններում աշխատող ուսուցչի դերին, ովքեր կրթելու եւ դաստիարակելու հետ զուգահեռ մեծ ջանք են գործադրում հայապահպանման եւ աշակերտների մօտ հայրենասիրութեան զգացում առաջացնելու ուղղութեամբ:

Պրն. Տէր-Մարտիրոսեանն իր խօսքի երկրորդ բաժնում խորը յարգանքով յիշեց Ս. Մեսրոպ Մաշտոցին եւ նրա աշակերտներին, ինչու չէ նաեւ նրանց միջոցով իրականացուած մեծ աշխատանքը՝ հայոց այբուբենի ստեղծման, հայկական դպրոցների հիմնադրման ու Աստուածաշնչի թարգմանութեան ուղղութեամբ՝ հայ ուսուցչի համար մեծ պատիւ համարելով Մաշտոցի նման ուսուցչապետ ունենալը:

Ծրագրի շարունակութեան մէջ պաստառի վրայ ցուցադրուեցին Կրթական խորհրդի միջոցով պատրաստուած տեսանիւթերը, որտեղ իրենց յոյզերն ու մաղթանքներն էին արտայայտել հայոց ազգային դպրոցնե-

րի վաստակաւոր տեսուչներ՝ Խաթունիկ Ալեքսանդրեանն ու Հայկ Հայրապետեանը, իսկ իրենց ուսուցիչներից ունեցած սպասելիքների մասին անկեղծացել էին տարբեր օղակների աշակերտները:

Մթնոլորտն աւելի ջերմացաւ գեղարուեստական անզուգական կատարումների եւ հաճելի անակնկալների շնորհիւ: Ծրագրի ընթացքում հայ երգով հանդէս եկան Արսինէ Ալեքսանդրեանը՝ խմբավար Համիկ Ալեքսանդրեանի երգեհոնի նուագակցութեամբ եւ Ռաֆֆի Խուդաբախշեանը, որը երգը մատուցեց իր եւ Ժանետ Խուդաբախշեանի միջոցով կատարուող կիթառի երաժշտութեան ներքոյ: Սաքսոֆոնի կատարմամբ ելոյթ ունեցաւ Ասպետ Սիմոնեանը: Ուշագրաւ էին յատկապէս ուսուցիչների համար նախատեսուած մրցութիւնները, որոնք նոյնպէս մեծ խանդավառութիւն պատճառեցին բոլորին: Մրցոյթների արդիւնքում պարգեւատրուեցին յաղթողները:

Ընթրիքից յետոյ Կրթական խորհրդի յատուկ դասաւորութեամբ դպրոցների անունից հնչեցին խօսքեր, որտեղ շնորհաւորանքի եւ շնորհակալական արտայայտութիւններով ու բարեմաղթանքներով ելոյթ ունեցան Նոր Ջուղայի հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարանի ուսուցչուհի Սքարլետ Հայրապետեանը, «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցի փոխտեսուչ Ռուբէն Գրիգորեանը, «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի տեսուչ Վրէժ Շիրուանեանը, «Քանանեան» աղջ. միջնակարգ դպրոցի փոխտեսուչ Ռիմա Սիմոնեանը եւ Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» ու «Մասիս» տարրական եւ ուղեցոյց դպրոցների ուսուցչուհի Վիոլետ Յարութիւնեանը:

Հարկ է նշել, որ ծրագրի ընթացքում Կրթական խորհրդի պատասխանատուները մօտենալով սեղաններին, ուսուցիչներին էին յանձնում նոյն խորհրդի կողմից նախատեսուած պատուոգրերն ու նուէրները:

Վերջում իր հայրական օրհնանքը փոխանցեց գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը: Նա անդրադառնալով Քրիստոսին՝ որպէս մեծ ուսուցչապետ, որն աշխարհ եկաւ մարդկային մտքին փոփոխութիւն տալու համար, նշեց. «*Քրիստոսն ասաց մեծութիւնը խոնարհութեան մէջ է։ Սակայն նա իր այս պատգամը միայն բառերով չարտայայտեց, այլ բացատրեց ու փոխանցեց իր կեանքով։ Յիսուս Քրիստոսն մեր մեծ ուսուցչապետն է եւ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Հայրապետն ու թարգմանիչ վարդապետները Քրիստոսի օրինակով կատարեցին իրենց առաքելութիւնը*»։ Գերշ. Սրբազան Հայրն ուսուցչութիւնը մարդակերտումի առաքելութիւն համարելով՝ ասաց, որ ուսուցիչը պէտք է անկեղծ եւ նախանձախնդիր լինի իր առաքելութեան մէջ, ապա գնահատանքի խօսք ուղղեց երեկոյթի կազմակերպիչներին եւ ուսուցիչներին շնորհաւորեց առիթի կապակցութեամբ:

«ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ» ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹԻ ՏՊԱԳՐՄԱՆ 100-ՐԴ ՀԱՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻ ՀԵՏ

«Ամենափրկիչ եկեղեցին տան մէջ» կրօնական ամսաթերթի տպագրութիւնն սկիզբ է առել 2007 թւականի մայիսից եւ իր գոյութեան ութ եւ կէս տարիների ընթացքում մեծ ուշադրութեան է արժանացել հասարակական տարբեր խաւերին պատկանող ընթերցողների կողմից: Զորս էջանոց գունազարդ այս ամսաթերթը տպագրւում է Սպահանի հայոց թեմի Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի ջանքերով եւ թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանի ու Կրօնական խորհրդի վերահսկողութեամբ եւ հովանաւորութեամբ: Պարբերաթերթն իր առաջին համարից անվճար տրամադրւել է թեմի բոլոր հայ ընտանիքներին:

2015 թւականի օգոստոսին լոյս է տեսել «Ամենափրկիչ եկեղեցին տան մէջ»-ի 100-րդ համարը: Առիթը պատեհ համարելով հարցազրոյց ենք կատարել Սպահանի հայոց թեմի առաջնորդ Սրբազան Հօր հետ՝ սոյն ամսաթերթի տպագրման նպատակների եւ առնչակից այլ հարցերի կապակցութեամբ, որը ներկայացնում ենք ստորեւ:

Ո՞ր թւականին եւ ինչպէ՞ս է առաջացել կրօնական պարբերաթերթի հրատարակելու միտքը եւ որո՞նք են եղել «Ամենափրկիչ եկեղեցին տան մէջ» ամսաթերթի հրատարակման նպատակները:

- Շուրջ ինը տարի առաջ Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովում անդրադարձ եղաւ եկեղեցին՝ եկեղեցու շէնքից դուրս բերելու, ժողովրդի տան մէջ փոխադրելու եւ ժողովրդի կեանքում ներկայութիւն դարձնելու գաղափարին ու այդ նպատակին հասնելու համար թեմի Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի նախաձեռնութեամբ հրատարակւեց «Ամենափրկիչ եկեղեցին տան մէջ» կրօնական պարբերաթերթը: Իւրայատուկ դիմագծով եւ բազմատեսակ կրօնական նիւթերով այս թերթի հրատարակման հիմնական նպատակն է ընթերցող հասարակութեանը եւ մասնաւորաբար մեր պատանիներին ու երիտասարդներին հաղորդ դարձնել հոգեւոր ժառանգութեանը՝ նրանց մտքի հորիզոնի առջեւ բանալով սուրբ-գրային, եկեղեցագիտական, կրօնական եւ ազգային հոգեւոր արժէքները:

Ինչո՞ւ է ընտրւել հէնց «Ամենափրկիչ եկեղեցին տան մէջ» անունը:

- Թերթը «Ամենափրկիչ» անւանւեց, քանի որ թերթի նիւթերի պատրաստման աշխատանքը եւ տպագրումը կատարւում է Ս. Ամենափրկչեան վանքում, որը միեւնոյն ժամանակ Սպահանի հայոց թեմի առաջնորդարանն է հանդիսանում, իսկ «Եկեղեցին տան մէջ» ենթախորագիրն, ինչպէս բացատրեցի, առաջացել է եկեղեցին ժողովրդի տան մէջ փոխադրելու գաղափարից:

Ո՞ւմ են ուղղւած թերթի նիւթերը եւ ինչպիսի՞ բնոյթ են կրում:

- Թերթն ունի տարբեր տարիքային խմբերին հետաքրքրող բաժիններ: Այն բաղկացած է հետեւեալ եօթ բաժիններից՝ «Խոհեր», որտեղ տպագրւում է թեմական առաջնորդի պատգամը, «Դասեր՝ ճշմարիտ քրիստոնէական կեանք ապրելու համար», «Քրիստոնէական», «Կրօնական-ծիսական», «Եկեղեցական» եւ «Իմանանք ճիշտը», որն անդրադառնում է բարեպաշտական սովորութիւններին: Իսկ եօթերորդ բաժինը «Մանկապատանեկան» է, որտեղ այս տարիքին յարմար կրօնական գիտելիքներից եւ աւետարանական դրւագներից բացի, գոյութիւն ունի մրցութային բաժին, որի ճիշտ պատասխանը գտնելու համար մանուկներն ու պատանիները ընթերցում են Աւետարանի համապատասխան հատւածը: Իւրաքանչիւր մրցոյթի ճիշտ պատասխանողների միջից վիճակահանութեամբ ընտրւում է յաղթողը: Յաղթողներն իրենց ծնողների հետ հրաւիրւում են Ս. Ամենափրկչեան վանք, որտեղ գնահատւում ու քաջալերւում են եւ պարգեւատրւում ոսկէ խաչով: Մինչեւ այսօր 100 ոսկէ խաչեր են նւիրւել պարբերաթերթի տարբեր համարների մրցոյթների յաղթողներին:

Ովքե՞ր են թերթի խմբագրական կազմի անդամները եւ ինչպէ՞ս են կատարւում նիւթերի ընտրութիւնը:

- Որպէս թերթի խմբագրական կազմի անդամներ աշխատանքը վերահսկում են թեմի Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի անդամներ՝ Թովմա սրկ. Գալստանեանը, տկն. Դեզիրէ Մկրտչեանը եւ օրդ. Սարինէ Յարութիւնեանը: Սակայն աշխատանքի գլխաւոր բաժինը՝ ինչպիսիք են նիւթերի դասաւորումն ու թերթի ձեւաւորումը, կատարւում է Թովմա սրկ. Գալստանեանի միջոցով, որը միեւնոյն ժամանակ կատարում է նաեւ Քրիստոնէական դաստիարակութեան խորհրդի գրասենեակի գործավարութեան պարտականութիւնը: Իսկ քանի որ խորհուրդը ենթակայ է թեմի Կրօնական խորհրդին, որի նախագահն է թեմական առաջնորդը, թերթի նիւթերի ընտրութեան եւ առնչակից այլ հարցերի

կապակցութեամբ, ես՝ որպէս Սպահանի հայոց թեմի առաջնորդ, վերահսկողութիւն եմ ցուցաբերում:

Գիտենք որ թերթն անվճար կերպով է տրամադրուում Սպահանի հայոց թեմի բոլոր հայ ընտանիքներին եւ յատկապէս գրադարաններին: Արդեօք պարբերաթերթը թեմից դուրս էլ առաքւո՞ւմ է թէ ոչ:

- Այս պարբերաթերթի կապակցութեամբ մեր կենտրոնացումը եղել է թեմի զաւակների վրայ, եւ թեմից դուրս աշխատանք տանելը մեր նպատակը չի եղել: Սակայն ներկայիս թերթից օրինակներ ուղարկւում են Հայաստանի Ազգային գրադարան եւ Թեհրանի «Արտակ Մանուկեան» թանգարան:

Թերթի տպագրման առնչութեամբ որեւէ խնդիր ունեցել է՞ք թէ ոչ:

- Երբեք խնդիրներ չեն եղել: Ամէն տարի թեմի Պատգամաւորական ժողովի կողմից համապատասխան բիւջէ է հաստատւում այս աշխատանքի իրականացման համար: Թերթն անվճար է տրամադրւում իւրաքանչիւր ընտանիքի եւ բնականաբար կը լինեն անհատներ, ովքեր անտարբեր կը գտնւեն դրա նկատմամբ, բայց կան նաեւ այնպիսի անձնաւորութիւններ, ովքեր ոչ միայն ամենայն բծախնդրութեամբ են ընթերցում պարբերաթերթը, այլեւ հետաքրքրուած են նրա բոլոր նիւթերով ու փորձում են կրօնական գիտելիքները փոխանցել իրենց ընտանիքի միւս անդամներին: Ոմանք էլ հաւաքելով բոլոր համարները թերթից հարուստ արխիւ են կազմել իրենց համար:

Թերթն այսօր ութ եւ կէս տարեկան է եւ բնականաբար այս տարիներից յետոյ ձեզ լաւ ծանօթ են ժողովրդի տեսակէտները՝ պարբերաթերթի նկատմամբ: Որքանո՞վ է թերթն ընդառաջւել ժողովրդի կողմից եւ ո՞ր տարիքային խումբն է աւելի հետաքրքրուած դրանով:

- Թերթը հրատարակւում է բոլոր տարիքային խմբերի համար եւ թերթում կան ցանկացած տարիքին յարմար նիւթեր: Ընդհանրապէս այս թերթի կապակցութեամբ կարծիքները դրական են եղել եւ սոյն աշխատանքը բարձր է գնահատւել ընթերցողի կողմից: Նրանք ովքեր նոյնիսկ անտարբեր են եւ չեն հետաքրքրքրւում այս ձեռնարկով, որեւէ բացասական բան չեն արտայայտում: Ես կարծում եմ, եթէ այս թերթն անգամ նւազագոյն օգտակարութիւն է ունեցել, դա արդէն յաջողութիւն է համարւում: Իսկ թէ որ տարիքային խումբն է աւելի հետաքրքրուած թերթով, բնականօրէն մանուկներն ու պատանիներն աւելի հետաքրքրուած են մանկապատանեկան էջով: Նոյնիսկ մեծերն էլ երբեմն հետաքրքրութիւն են ցուցաբերում այս էջի նկատմամբ, սակայն մենք տարիքային սահմանում ենք ճշտել մրցոյթին մասնակցելու համար: Կարծում եմ, որ այս թերթը գոհացնում է ամէն տարիքի ընթերցողներին:

Վերջում եթէ որեւէ աւելացում ունէք, խնդրեմ:

- Կոչ եմ ուղղում մեր ժողովրդի զաւակներին, որ «Ամենափրկիչ եկեղեցին տան մէջ» կրօնական ամսաթերթը որպէս սովորական թերթ չնկատեն, այլ այս թերթով եկեղեցու ներկայութիւնն իրենց տան մէջ աւելի զգալի դարձնեն, որպէսզի կարողանան իրենց հաւատքի մէջ առաւել ամրանալ ու զօրանալ, իրենց ինքնութիւնը աւելի դրսեւորել եւ ի մասնաւորի՝ որպէս հաւաքականութիւն, ժողովուրդ, ազգ եւ համայնք կարողանան եկեղեցու շուրջ համախմբւած լինել ու կրօնական գիտելիքներով զինւած, քրիստոնեային վայել եւ աստուածահաճոյ կեանքով ապրել:

Հարցազրոյցը վարեց «Այլիք» օրաթերթի Նոր Ջուղայի թղթակիցը:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՀՆՉԵՑ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ

Սեպտեմբերի 23-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի բակում իմի էին հաւաքւել տարրական օղակի «Արմէն», ուղեցոյց-միջնակարգ օղակների «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց դպրոցների աշակերտ-ուհիները, տեսչութիւնը, ուսուցչական կազմերը եւ ծնողները:

Աշակերտութեանը ողջունելու էին եկել Սպահանի հայոցի թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը եւ Պատգամաւորական ժողովի, Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչները:

Նախ ներկաներին ողջունեց «Արմէն» դպրոցի տեսուչ պրն. Վրէժ Շիրվանեանը, որը բարի գալստեան խօսք ուղղեց եւ բոլորին շնորհաւորեց ուսումնական տարեմուտը:

Յաջորդիւ արտայայտուեցին «Քանանեան» դպրոցի տեսչուհի՝ տկն. Սալարիֆարը եւ «Կատարինեան» դպրոցի տեսուչ՝ պրն. Մոհսէն Փուրը, որոնք իրենց հերթին շնորհաւորեցին ուսումնական նոր տարեշրջանի մեկնարկը՝ այն համարելով ուսումնա-դաստիարակչութեան գարունը, յորդորելով աշակերտութեանը դպրոցական շրջանից թէ՛ դաստիարակութեանը եւ թէ՛ ուսմանը առնչւող դասեր քաղել:

Ապա յանուն Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի արտայայտուեց կազմի ատենապետ՝ տկն. Սաթօ Աւետումեանը: Նա իր խօսքերում շեշտեց դպրոցական շրջանում աշակերտ-ուսուցիչ յարաբերութիւնը եւ այդ յարաբերութեան արդիւնքում աշակերտութեանը փոխանցւած հայեցի դաստիարակութիւնը: Ակնարկելով Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին՝ աշակերտութեանը փոխանցեց լծուել արարող կեանքի ու պահանջատէրը լինել հայ ազգի արդար իրաւունքների: Տկն. Աւետումեանը նաեւ պարսկերէն լեզուով փոխանցեց իր պատգամը:

Վերջում արտայայտուեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը: Սրբազան Հայրը դպրոցի կազմին եւ աշակերտութեանը վստահեցրեց, որ տարեշրջանի ընթացքում, ազգային մարմինների հետ միասնաբար զօրավիգ է հանդիսանալու եւ դպրոցի կողքին է լինելու՝ աշակերտների հայօրէն կրթելու եւ առողջ սերունդ դաստիարակելու գործում: Նա շնորհաւորեց Իրանի «Սրբազան պաշտպանութեան շաբաթ»-ը, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման տօնը: Թեմական առաջնորդը իր արտայայտութիւնների շարունակութեան մէջ մատնանշելով 2015 թւականի շրջադարձային լինելը, ակնարկ ունեցաւ ընթացիկ տարւայ ընթացքում տեղի ունեցած միջոցառումներին եւ կատարւած աշխատանքներին:

Գերշ. Սրբազան Հայրն օրհնեց ուսուցչական կազմերին, որոնք ստանձնել են մատաղ սերնդին կրթելու դժւարին աշխատանքը, ծնողներին յորդորեց միշտ լինել հայ դպրոցի կողքին, իսկ աշակերտներին մաղթեց լինել ժրաջան եւ աշխատասէր, որպէսզի դառնան Մեսրոպ Մաշտոցի իսկական աշակերտները:

Սրբազան Հօր խօսքերի աւարտին, բոլորը միասնաբար արտասանեցին «Տէրունական աղօթքը» եւ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի եւ Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանի հնչեցրած զանգի ներքոյ, աշակերտները ուղղորդուեցին դէպի իրենց դասարանները:

Սրբազան Հայրը եւ ազգային մարմինները ներկայացան նաեւ Հայոց ազգային մանկապարտէզ-նախակրթարան, որտեղ ողջոյնի խօսք արտասանեց դպրոցի տեսչուհի՝ տկն. Քառոլին Դիլանչեանը եւ շնորհակալութիւն յայտնեց ազգային մարմիններին՝ դպրոցին ինչպէս միշտ սատար հանդիսանալու, նաեւ անցնող տարւայ ընթացքում դպրոցում նորոգութիւններ իրականացնելու համար: Սրբազան Հայրը եւս մտերիմ զրոյց ունեցաւ դպրոցի սաների հետ, նրանց յորդորեց լինել հնազանդ իրենց ուսուցիչներին, սիրել հայոց վարժարանը եւ լաւ սովորել հայոց լեզուն: Վերջում օրհնեց բոլորի ներկաներին եւ «Տէրունական աղօթք»-ից յետոյ հնչեցրեց առաջին զանգը:

Շնորհաւորելով դպրոցական տարեմուտը, մաղթում ենք յաջողութիւններով լի տարեշրջան:

Ն.Ջ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ԿԱՏԱՐԻՆԵԱՆ» ՏՂԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԱՅՑԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Երկուշաբթի՝ 2015 թւականի հոկտեմբերի 19-ին, Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու անուանակոչութեան տօնի (Ս.Ա. Վանքի տօն) առթիւ թեմական առաջնորդին եւ Ազգային իշխանութեանը շնորհաւորանքներ փոխանցելու եւ Ազգային առաջնորդարանի դարաւոր կառոյցին առաւել ծանօթանալու նպատակով, Ս.Ա. վանք այցելեցին Նոր Ջուղայի հայոց ազգային «Կատարինեան» տղայոց դպրոցի 7-րդ, 8-րդ եւ 9-րդ դասարանների աշակերտները: Սաներին ուղեկցում եւ ընկերակցում էին դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի ներկայացուցիչներ:



Ս.Ա. վանք մուտք գործելուց յետոյ, նրանց դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի եւ Հանրային կապի գրասենեակների գործավարները: Սկզբում խումբն այցելեց «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի, որտեղ նրանց տեղեկութիւններ փոխանցուեց Ս. Ամենափրկչեան վանքի կառուցման, եկեղեցու ճարտարապետութեան, պատկերների եւ յարակից զանազան հարցերի շուրջ:

Յաջորդիւ, Ծաղկեայ դահլիճում, աշակերտութեանն այցելեց Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը: Հանդիպմանը ներկայ էին նաեւ արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, Կրօնական խորհրդի ատենապետ պրն. Վարուժ Մովսիսեանը եւ Կրթական Խորհրդի ներկայացուցիչները: Թեմական առաջնորդը ողջունելով աշակերտութեան այցելութիւնը Ս.Ա. վանք եւ գնահատելով պատասխանատուների մտայղացումը, նրանց յորդորեց բծախնդիր լինել ազգային, կրօնական, մշակութային արժէքների պահպանման հարցում եւ կրթութեան ու գիտութեան կողքին մշտապէս հետաքրքրուել համայնքի ընդհանրական կեանքով: Այնուհետեւ արտայայտուեցին դպրոցի փոխ-տեսուչ Ռուբէն Խաչիկ-Գրիգորեանը եւ մշակութային աշխատանքների պատասխանատու, եւ հայերէնի ուսուցչուհի Սօսէ Պօղոսեանը:

Հանդիպումից յետոյ, խումբն այցելեց Ս.Ա. վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան, որտեղ գրադարանավարուհին նրանց ծանօթացրեց գրադարանի զանազան բաժիններին, աշխատանքներին ու հնարաւորութիւններին, ապա դպրոցի նորամուտներին յանձնեց գրադարանի անդամակցութեան նոր տոմսեր: Խաչատուր Կեսարացու անուան թանգարանը եղաւ աշակերտութեան այցելութեան յաջորդ հանգրուանը:

Այցելութիւններից յետոյ, աշակերտներն իրենց պատասխանատուների հետ Ս.Ա. վանքի արեւելեան բակի տարածքում վայելեցին Ծնողական խորհրդի կողմից պատրաստուած հիւրասիրութիւնը:

ԳԵՐՇ. Տ. ԲԱԲԳԷՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳ. «ՔԱՆԱՆԵԱՆ» ԴՊՐՈՑՈՒՄ

Նոր Ջուղայի հայոց ազգ. «Քանանեան» միջնակարգ աղջկանց դպրոցի տնօրինութեան նախաձեռնութեամբ, ընտանիք-դպրոց փոխյարաբերութեան զարգացման շրջագծում, չորեքշաբթի՝ հոկտեմբերի 28-ի առաւօտեան ժամը 11:00-ին, հայոց ազգ. կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» դահլիճում, կազմակերպւել էր 2015-2016 ուսումնական տարեշրջանի առաջին ծնողական հոգեւոր լսարանը, ուր ծնողների եւ ուսուցիչների ներկայութեամբ «Աստուածաշնչի կարեւորութիւնը եւ դերը հայ ընտանիքներում» թեմայի շուրջ բանախօսական ելոյթ ծաւալեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը:

Սկզբում դպրոցի փոխտեսչուհի Ռիմա Սիմոնեանը ողջունելով ներկաներին՝ շնորհակալական խօսք ուղղեց առաջնորդ Սրբազան Հօրը դպրոցի հրաւէրին ընդառաջելու կապակցութեամբ: Տկն. Սիմոնեանն իր խօսքի շարունակութեան մէջ ընդգծելով, որ ազգային վարժարանները ազգային դաստիարակութեան կողքին մեծ կարեւորութիւն են տալիս յատկապէս կրօնական եւ հոգեւոր դաստիարակութեանը, անդրադարձաւ այս շրջագծում դպրոցի կողմից ծրագրւած միջոցառումներին:

Այնուհետեւ տեսչուհի տկն. Սալառիֆառը նոյնպէս ողջոյնի խօսք ասելով գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանին եւ միւս ներկաներին՝ Սրբազան Հօրը հրաւիրեց բանախօսելու թեմայի կապակցութեամբ:

Թեմական առաջնորդ Սրբազան Հայրն օրինակներով ու առակներով ողողւած, դիւրըմբռնելի եւ պատկերաւոր իր ելոյթի սկզբում շեշտելով, որ միայն Աստուածաշունչ ունենալը բաւարար չէ եւ հարկաւոր է ճանաչել ու ապրել Սուրբ Գիրքը, ասաց. «*Պատմութեան ընթացքում Աստուածաշունչն իր խորը դրոշմն է ունեցել մարդկային մտածողութեան եւ մշակութային զարգացման գործում: Քրիստոնեայ մարդու համար Աստուածաշունչը աստուածային յայտնութիւն է եւ սրբազան արժէք*»:

Գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանն իր խօսքի շարունակութեան մէջ Աստուածաշնչի ուղղափառ, ճշգրիտ եւ ամբողջական ճանաչումը անհրաժեշտութիւն համարեց եւ աւելացրեց. «*Այսօր Հայաստանում տարբեր աղանդական շարժումներ կան, որոնք ժողովրդին շեղում են իրենց իսկական եւ ճշգրիտ հաւատից: Պէտք է զգուշանալ նման շարժումներից, սակայն պէտք չէ պայքարել նրանց դէմ, այլ նրանց դիմաց պէտք է գինւել՝ հաւատի վրայ հաստատ մնալով եւ Աստուածաշունչը լաւապէս ճանաչելով ու հաւատի աչքով հասկանալով*»:

Նա նշելով նաեւ Աստուածաշնչի դերը հայ ընտանիքների կեանքում, շեշտեց, որ այդ դերը յատկապէս աւելի գունեղ դարձաւ «Ոսկեդար»-ում, Աստուածաշնչի թարգմանութիւնից յետոյ, քանի որ այդ սքանչելի թարգմանութեան շնորհիւ Աստծու խօսքն աւելի ըմբռնելի եւ հասկանալի դարձաւ հայ ժողովրդի համար:

Թեմական առաջնորդն իր ելոյթի մի այլ բաժնում նկատելով, որ այսօրւայ աշխարհում բարոյականութեան անկման հիմնական պատճառը հոգեւոր արժէքներից եւ սրբութիւններից հեռանալն ու նիւթականի գերի դառնալն է, աւելացրեց՝ մարդ որքան Աստծու ներկայութիւնը զգալի դարձնի իր կեանքում, այնքան աւելի հեռու կը մնայ չարութիւնից:

Վերջում բանախօսն Աստուածաշնչում ընտանիքի թեմային անդրադարձող հատուածների մէջբերմամբ՝ մատնանշեց այն կարեւոր տեղը, որը Սուրբ Գրքում տրւել է ընտանիքի սրբութեանը եւ զաւակների դաստիարակութեանը, ապա իր խօսքը եզարափակեց ներկաներին յորդորելով՝ Աստուածաշունչը դարձնել իրենց կեանքի ուղեցոյցը եւ Աստուածաշնչով հարստանալ, լուսաւորել իրենց կեանքն ու բիւրեղացնել քրիստոնէական առաքինութիւնները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 24-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Նախաձեռնութեամբ Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի, ուրբաթ, սեպտեմբերի 4-ի երեկոյեան ժամը 7:00-ից, Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան շրջափակում, Նոր Զուղայի եւ Շահինշահրի հայ համայնքների հոծ թւով ժողովրդի մասնակցութեամբ, մեծ հանդիսութեամբ նշուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան 24-ամեակը:

Երեկոյի ընթացքում հանդիսավար Մանիա Ղուկասեանի միջոցով հետաքրքիր տեղեկութիւններ հաղորդուեցին Արցախի պատմականի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ձեւաւորման, Արցախեան ազատամարտի եւ անկախութեան վերաբերեալ, որոնք ընդմիջւում էին թեմային համահունչ վաւերագրական ֆիլմերից հատուածների ցուցադրմամբ:

Ներկաների համար ուշագրաւ էր յատկապէս միութեան շրջափակում կազմակերպւած լուսանկարների ցուցահանդէսը, ուր լուսարձակի տակ էին առնւել Արցախեան պատերազմն ու ազատամարտիկները, տեսարժան վայրերը եւ ժողովրդի կենցաղն ու մշակոյթը: «Ռուբէն» երիտասարդական միութեան համագործակցութեամբ նախատեսւել էր նկարչութեան կրպակ, որտեղ մանուկներն առիթ ունեցան թղթի վրայ նկարելու իրենց յուշերն ու երեւակայութիւնները հայրենիքի եւ հայրենի Արցախի մասին, իսկ Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի պատասխանատու Վերգինէ Միրզախանեանի համագործակցութեամբ, առանձին կրպակում տեղի ունեցաւ Արցախին առնչւող թեմաներով գրքերի ծանօթացում, ինչպիսին էին՝ հանրագիտարաններ, արւեստի եւ աշխարհագրութեան մասին գրականութիւն, պատերազմից յուշագրութիւններ եւ այլն:

Ծրագրին առաւել ջերմութիւն պարգեւեցին յայտագրում նախատեսւած գեղարւեստական կատարումները: Այս բաժնում պարային ելոյթներով հանդէս եկաւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» պարախումբը, իսկ ազգային-յեղափոխական երգերի կատարմամբ՝ Զարենուշ Աղուրեանն ու Շանթ Թահմազեանը: Տօնախմբութեան ընթացքում հնչեցին նաեւ հայերէն երգեր, որոնց բուռն խանդավառութեամբ արձագանքեց ներկայ ժողովուրդը՝ իր հայկական շուրջպարով: Երգերը կատարւեցին «Անի» երաժշտական խմբի կենդանի նւագակցութեամբ եւ Կարէն Օհանեանի ու Սարօ Ղարախանեանի երգեցողութեամբ:

Յատկանշական է՝ կազմակերպիչ յանձնախումբը պատրաստել էր առիթին առնչւող բրիւշուր, որը բաժանւեց ներկաների միջեւ:

ԳԻՏՈՒՆԻԿԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՏՆԱԿ

Վերոնշեալ գեղեցիկ անուան տակ կազմակերպուած հետաքրքիր ու յաջող ծրագիրն էր, որ ամռան արձակուրդին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մանկական խաղերի բաժնին կից բացօթեայ տարածքում, ընդունեց մեծ թով մանուկներ: Կիրակի եւ չորեքշաբթի օրերը երեկոյեան ժամը 7:30-9:30-ը մանուկ մասնակիցներն ունկնդրեցին հեքիաթներ ու սովորեցին երգեր, իսկ վերջում ներկայացուած հեքիաթների ու սովորած երգերի հիման վրայ ստեղծագործեցին նկարչութիւններ ու զարդանախշե ցին կաւէ իրեր:

«Գիտունիկի մանկական տնակ»-ը իր աշխատանքը աւարտեց կիրակի սեպտեմբերի 20-ին միութեան հանդիսութիւնների դահլիճին կից սրահում: Ամփոփիչ միջոցառումը, որ յագեցած էր նաեւ տիկնիկային ներկայացումով, մեծ հետաքրքրութեամբ ընդունեց ոչ միայն մասնակից մանուկների, այլ նաեւ միջոցառմանը ներկայ ծրագիրը նախաձեռնող միութեանս Մշակութային միաւորի վարչակազմի, ծնողների ու տատիկների կողմից:

Նշելի է, որ ծրագիրը իրականացուեց միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի ու մի շարք միութենականների անվերապահ համագործակցութեամբ:

ԼԻՍԲՈՆԻ ՀԻՆԳ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆԻՒԻՐՒԱԾ ՅՈՒՇԵՐԵԿՈՅ

Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնն ու Թուրքիոյ պետութեան կողմից դրա ուրացումը բարձրաձայնելու նպատակով, 1983 թւականի յուլիսի 27-ին Հայ Յեղափոխական Բանակի հինգ անդամներ՝ Սեդրակ Աճեմեանը, Վաչէ Դաղլեանը, Արա Քերջլեանը, Սիմոն Եահնեանը եւ Սարգիս Աբրահամեանը Լիսբոնում տեղակայուած Թուրքիայի դեսպանատունը գրաւելուց յետոյ պայթեցրին այն եւ փլատակների տակ ողջակէզ դարձած՝ նահատակուեցին:

Լիսբոնում զոհուած հինգ մարտիկների յիշատակը յարգելու եւ վառ պահելու նպատակով, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Սկաուտական միաւորի Գերագոյն մարմնի նախաձեռնութեամբ, չորեքշաբթի՝ 2015 թւականի սեպտեմբերի 9-ի երեկոյեան ժամը 8-ին, միութեան սրահում տեղի ունեցաւ յուշերեկոյ: Միջոցառման սկզբում միաւորի Արի-արենուշական հատուածի միջոցով կատարուեց դրօշակի արարողութիւն, ապա միաւորի Գերագոյն մարմնի խօսքն ընթերցեց Մանիա Ղուկասեանը: Ծրագրի ընթացքում ներկաներն ունկնդրեցին Արեգա Սիմոնեանի եւ Վանիա Պետրոսեանի կատարմամբ՝ Սիլւա Կապուտիկեանի հայրենասիրական ստեղծագործութիւններից, դիտեցին հինգ մարտիկների անձնազոհ ակտի մասին փաստա-վաւերագրական տեսաժապաւէնը եւ Հարմա կարապետեանի ու Թանգիկ Միրզախանեանի կատարմամբ՝ «Ձինուորի երգը»:

Ներկաները վայելեցին նաեւ միաւորի Գայլիկ-արծուիկների կատարմամբ հայրենասիրական խմբերգեր: Երեկոն վարեց Վեհանուշ Խուդաբախշեանը:

Յուլիսի 26-ից 30-ը միաւորի նախաձեռնութեամբ անցկացուեց առիթին նուիրուած ֆուտբոլի 25-րդ մրցաշարը:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Թւականիս հինգշաբթի՝ հոկտեմբերի 15-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ բանախօսական եւ գեղարուեստական յայտագրով յագեցած ձեռնարկ՝ նուիրուած Ս. Թարգմանչաց եւ Հայ Մշակոյթի տօնին: Նախաձեռնութիւնը միութեան Մշակութային միաւորի վարչութեանն էր, որին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, քահանայից դասից, ազգային իշխանութեան ներկայացուցիչները, Հայ Դատի շրջանիս յանձնախմբի ներկայացուցիչը, մշակութային ասպարէզում աշխատողներ եւ այլ ներկաներ:

Օրուայ առթիւ հրաւիրուած էր բանախօսելու Շահինշահրի հոգեւոր տեսուչ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը: Բանախօսն իր ելոյթի սկզբում հայոց պատմութեան իմացութիւնն ու մեր մեծերի անձն ու գործը ճանաչելը պարտադիր համարեց իւրաքանչիւր հայի համար, ապա իւրովի մեկնաբանութեամբ անդրադարձաւ Մեսրոպ Մաշտոցի անզուգական ու բացառիկ դերակատարութեանը՝ մեր ազգի ճակատագիրը կերտելու եւ հետագայ ժամանակների ուղիները հարթելու համար: Նա հետաքրքիր մէջբերում կատարելց Մ. Մաշտոցի ծննդեան 1600-ամեակի առթիւ Պ. Սեւակի խօսքերից, որտեղ ասում է. «*Աւարայրի ճակատամարտը, ըստ էութեան տեղի ունեցաւ, ոչ թէ 451 թւին, այլ մօտաւորապէս կէս դար առաջ, Գողթան գաւառի այն քարանձաւներում, որտեղ Մաշտոցը վճռել էր հոգալ իր ժողովրդի փրկութեան մասին…*», եւ Մեսրոպ Մաշտոցի գործի բացառիկութիւնն՝ իր նշանակութեամբ հասկանալու համար, անդրադարձաւ 387 թւականին Հայաստանի բաժանմանը Պարսկաստանի եւ Բիւզանդիայի միջեւ եւ ասաց. «*Մեսրոպեան գրերով ստեղծւում են ազգային ինքնութեան ու հաւատքի պահպանման այն ազդակները, որոնք հայ զինւորին առաջնորդելու էին Աւարայրի ճակատամարտում եւ ճիշտ է ասել, որ Վարդանանց հետ կռւել են նաեւ հայոց գրերը, ուրեմն, կռւել է նաեւ ինքը՝ Մեսրոպ Մաշտոցը*»:

Բանախօսը հետաքրքիր մէջբերումներ կատարեց նաեւ գերմանացի գիտնական-հայագէտ Մարկ Վարտի, ֆրանսացի հայագէտ Ֆրեդրիկ Ֆէյդի եւ հունգարացի բանասէր դոկտ. Էդմոնդ Շուցի մտքերից, որոնք ուղղւած էին հայոց լեզւի առանձնայատկութեանն ու Մ. Մաշտոցի սքանչելի ստեղծագործութեանը:

Մէջբերումներ կատարելով Խորենացու եւ Մաշտոցի աշակերտ Կորիւնի վկայութիւններից, Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանն ասաց. «*Մաշտոցը լուծում էր ոչ այնքան մշակութային եւ հոգեւոր խնդիրները, որքան քաղաքական խնդիր, որով նրա պատւելի անձը պարզապէս գիր ստեղծողից վերածւում էր խորաթափանց քաղաքագէտի, եւ կատարած գործն էլ դառնում էր քաղաքագիտական խոշոր յաղթանակ*»: «*Մաշտոցը, ոչ միայն եկեղեցական, այլ նաեւ պետական խոշոր գործիչ էր՝ իր աշխարհահայեացքով, կենսագրու-*

թեամբ եւ իր յստակ գործերով, եւ պատահական չէր, որ նա պետական ծառայութեան է ընդունուում Արշակունեաց արքունիքում»,- յաւելեց բանախօսը:

Հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը Մաշտոցին որակեց, որպէս հմուտ քաղաքագէտ, դիւանագէտ, մեծ հեղինակութիւն վայելող զինուորական, պետական գործիչ, երաժիշտ եւ առաջին լեզուաբան: «*Մաշտոցը հանճար էր. նա եղաւ մեծ սկիզբ, բայց եւ դարձաւ մեծ շարունակութիւն եւ դրանում է նրա բացառիկութիւնը*»,- ընդգծեց նա:

Գեղարուեստական բաժնում, Միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» համոյթը գեղարուեստական ղեկավարութեամբ ասմունքի խմբի պատասխանատու Ռիմա Սիմոնեանի եւ խմբի աւագ անդամուհի Կարին Տէր-Մարտիրոսեանի, ասմունքի եւ պարի համադրութեամբ բեմականացրեց «Մեծ ջահակիրը» խորագրով կոմպոզիցիան, որն ինքնատիպ համադրութիւն էր իրանահայ բանաստեղծ Վարանդի, Պարոյր Սեւակի եւ այլ ականաւոր բանաստեղծների քերթուածքներից, որը զուգորդուած էր հայ ժողովրդի լուսաւորութեան ու ինքնութեան խորհրդանիշ՝ մեսրոպաստեղծ ոսկեղնիկի հերթական էկրանաւորմամբ եւ Մ. Մաշտոցի հոգեկան ապրումները ներկայացնող մենապարով, ինչը ամփոփուեց «Լոյս»-ի պարով եւ պատահական չէր, որ բեմում գերակշռող գոյնը սպիտակն էր ու ոսկեգոյնը: Բեմային ծրագիրը աւարտուեց «Կռունկ» պարախմբի պարային համարով՝ պարուսոյց Յակոբ Մարգարեանի բեմադրութեամբ:

Ծրագրի աւարտին թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրն եզրափակիչ խօսքում իր հիացմունքը յայտնեց կազմակերպուած միջոցառման եւ Մշակոյթի տօնին ուղղուած այլ տօնախմբութիւնների կապակցութեամբ: Նա իր գնահատանքի խօսքն ուղղեց օրուայ բանախօսին՝ տարբեր մօտեցումով եւ իր մտածումներով ու ստեղծագործութեամբ Մ. Մաշտոցի անձն ու գործը ներկայացնելու համար, նաեւ գնահատանքի խօսք ուղղեց գեղարուեստական յայտագրի մասնակիցներին ու պատասխանատուներին, որոնք երգի, պարի ու խօսքի մջոցով, գեղեցկօրէն փոխանցեցին իրենց պատգամը:

Գերշ. Սրբազան Հայրը խօսելով օրուայ խորհրդի մասին, ասաց, որ եթէ ամէն տարի մենք նշում ենք Հայ Մշակոյթի օրը, դա միայն յիշելու համար չէ, այլ նաեւ միտուած է արժեւորելու, բարձրաձայնելու եւ այդ նոյն ոգով շարունակելու մեր յաղթական երթը: Սրբազան Հայրն իր խօսքը աւարտեց Հայ Մշակոյթի, Ս. Թարգմանչաց եւ Ուսուցչաց տօների առթիւ շնորհաւորական խօսքերով:

Նշելի է, որ երեկոյի իրականացմանը իրենց համագործակցութիւն էին բերել Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախմբի ղեկավար Արմէն Ամիրխանեանը, Հարմա Կարապետեանը (երաժշտութիւն), Վերգինէ Միրզախանեանը (թեմատիկ պատկերների պատրաստում եւ էկրանաւորում), Նայիրի Այւազեանը եւ Ռազմիկ Նազարեանը (բեմայարդարում), Ասպետ Սիմոնեանը եւ Սեւադա Խաչիկեանը (հնչիւնային եւ լուսային համադրում):

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՁԵՌԱԳՈՐԾԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱԲԱԹՈՒԱՅ ԱՌԹԻՒ

Հայ մշակոյթի շաբաթուայ առթիւ, Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը՝ հայկական ձեռարուեստի պահպանման եւ նոր սերնդի հետաքրքրութիւնն ու ուշադրութիւնը դէպի այն կենտրոնացնելու նպատակով, իր կենտրոնատեղիում կազմակերպել էր ձեռագործի ցուցահանդէս, որտեղ արուեստասէրներն առիթ ունեցան մօտիկից տեսնելու հայուհու բարձրաճաշակ, իւրօրինակ եւ ինքնատիպ ձեռարուեստից մի գեղեցիկ փունջ:

Բարեգործական ընկերութիւնը, ամենամեայ կարգով, ձեռագործի մասնագէտներ Հիլդա Խուդաբախշեանի եւ Ծնորա Եսայեանի գլխաւորութեամբ կազմակերպած դասընթացների մասնակիցների ձեռքի աշխատանքները ցուցադրութեան է դնում: Այս տարի ցուցահանդէսը նուիրելով Հայ մշակոյթի շաբաթաւան՝ ցուցադրուեց ձեռարուեստի ուսուցչուհի Հիլդա Խուդաբախշեանի եւ Նոր Զուղայի ու Ծահինշահրի հայուհիների ձեռագործները, ովքեր բախտ էին ունեցել ժամանակին աշակերտելով տկն. Խուդաբախշեանին, սերտել արուեստի այս բաժնի տարբեր տեսակները: Ցուցահանդէսում հիմնականում ներկայացել էին ասեղնագործ եւ մաքուքագործ սեղանի ծածկոցներ եւ շրջանակներ՝ հայկական զարդանախշերով:

Մէկ շաբաթ տեւողութեամբ այս ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ ուրբաթ՝ հոկտեմբերի 16-ի առաւօտեան՝ ձեռամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի եւ ներկայութեամբ Բարեգործական ընկերութեան անդամուհիների ու արուեստասէր ժողովրդի:

Բացման հանդիսութիւնն աւարտուեց ընկերութեան կենտրոնատեղիի շրջափակում կազմակերպած համեստ հիւրասիրութեամբ:

ՋԱՒԱԽՔԻՆ ՆՒՒՐՒԱԾ 16-ՐԴ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՂՇՏԱՀԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ Նոր Զուղայի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան եւ համագործակցութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտ. վարչութեան, հինգշաբթի՝ հոկտեմբերի 1-ի երեկոյեան, «Արարատ» միութեան շրջափակում տեղի ունեցաւ Զաւախքին նուիրուած 16-րդ բարեգործական դաշտահանդէսը, որի հասոյթն ամբողջութեամբ յատկացուեց շրջանի Հայ Դատի յանձնախմբի կողմից հիմնադրուած Զաւախքի օժանդակութեան հիմնադրամին:

Անակնկալներով եւ ուրախ պահերով ողողուած այս միջոցառումն իր բազմատեսակ խաղերով եւ անուշաբոյր ուտեստներով, վիճակախաղով, ուրախ երաժշտութեամբ եւ մտերմիկ ու զւարճալի միջավայրով, մեծ խանդավառութիւն առաջացրեց ներկաների՝ ի մասնաւորի մանուկների ու պատանիների մօտ:

Նախատեսուած բաժինների շարանում յատկապէս ուշագրաւ էին ջաւախքահայ կնոջ եւ տղամարդու տարազներով զգեստաւորուած երկու պատանիները, ովքեր ոչ միայն ներկաներին հիացնում էին իրենց հայկական աւանդական հանդերձանքով, այլեւ ցանկացողների հետ լուսանկարուելով յաւերժացնում էին նրանց ընտանեկան եւ ընկերական գեղեցիկ պահերը:

Հարկ է նշել նաեւ, որ միջոցառման ընթացքում ընդունւում էին ժողովրդի նուիրատուութիւնները:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՒԻՐՒԱԾ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Նոր Ջուղայի Հայուհեաց բարեգործական ընկերութեան նախաձեռնութեամբ, ուրբաթ՝ հոկտեմբերի 30-ի երեկոյեան, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում, կազմակերպուել էր գրական երաժշտական երեկոյ՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին:

Երեկոյին ներկայ էին Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Չարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, ազգային մարմիններին, հայոց ազգ. դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչներ եւ Շահինշահրի ու Նոր Ջուղայի հայ համայնքների անդամներ:

Ծրագրի սկզբում բացման խօսքով ելոյթ ունեցաւ Հայուհեաց բարեգործական ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի ղեկավար դկտ. Սիլւա Ալլահվերդեանը, ով բարիգալստեան խօսք ուղղելով ներկաներին, իր ուրախութիւնը յայտնեց, որ Բարեգործական ընկերութեան վաղեմի երազանքը՝ գրական-երաժշտական երեկոյ կազմակերպելու կապակցութեամբ, իրականացուել է 2015 թականին՝ նուիրուած լինելով Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին եւ յատկապէս հոկտեմբերին՝ հայ մշակոյթի ամսին: Նա իր խօսքի շարունակութեան մէջ ընդգծելով, որ 2015 թականը բոլորիս համար ծանր, բարդ եւ շատ պատասխանատու տարի է, աւելացրեց, որ հայ ազգն ամբողջովին, մէկ անձի նման համախմբուել է Հայոց ցեղասպանութեան անմեղ եւ սուրբ զոհերի յիշատակը լաւագոյնս ոգեկոչելու ուղղութեամբ, որպէսզի կարողանայ բազմաթիւ միջոցառումների, ձեռնարկների, ցուցահանդէսների ու ծրագրերի միջոցով ի լուր աշխարհի յիշեցնի, որ պահանջում է եւ տէրն է իր արդար իրաւունքի:

Բացման խօսքին յաջորդեց գեղարուեստական յայտագրով ծրագիրը, որն արգասիքն էր Բարեգործական ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի եւ Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի համատեղ աշխատանքի: Գեղարուեստական ծրագիրը բաղկացած էր հինգ բաժիններից՝ իւրաքանչիւր բաժինն առանձնաբար նուիրուած լինելով Սիլւա Կապուտիկեան, Համօ Սահեան, Եղիշէ Չարենց, Գէորգ Էմին եւ Վահան Տէրեան անուանի բանաստեղծներից մէկին: Նշուած բաժինները ողողուած էին պատկան հեղինակի բանաստեղծութիւնների ասմունքներով, ինչու չէ նաեւ անուանի երաժիշտների միջոցով երաժշտութեամբ մշակուած ստեղծագործութիւններով եւ պաստառի վրայ ցուցադրուող համահունչ պատկերներով:

Ծրագրի ասմունքներն իրագործուեցին ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիներ՝ Վանիա Պետրոսեանի, Նարեգա Սիմոնեանի, Վանա Զոհրաբեանի, Վեհանուշ Խուդաբախշեանի, Մեղրի Կարապետեանի եւ Վանէ Շահնազարեանի միջոցով՝ ղեկավարութեամբ դոկտ. Սիլւա Ալլահվերդեանի, իսկ խմբական երգերը կատարեց Ս.Ա. Վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ խմբավար-դաշնակահար Համիկ Ալեքսանդրեանի ղեկավարութեամբ:

Ընթացքում հնչեցին նաեւ երգերի մենակատարումներ նոյն երգչախմբի մենակատարներ՝ Անասիկ Յովսէփեանի եւ Արսինէ Մարգարեանի, ինչպէս նաեւ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի միջոցով, իսկ մէկ զուգերգով հանդէս եկան՝ Լալա Ալեքսանդրեանն ու Փարելի Թահմազեանը:

Վերջում ընկերութեան անունից անդամուհի Վեհանուշ Խուդաբախշեանը շնորհակալական խօսք ուղղեց մասնակիցներին եւ հանդիսատեսին, ապա ձեռամբ առաջնորդ Սրբազան Հօր, Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութեան նախագահ Սանդ-

րա Խաչատրեանի եւ փոխ-նախագահ Ժենետ Դաւթեանի գնահատագրեր շնորհեցին «Տաթեւ» երգչախմբի ղեկավար Համիկ Ալեքսանդրեանին, «Փարոս» ասմունքի խմբի ղեկավար դոկտ. Սիլա Ալլահվերդեանին, միջոցառման տպագրական աշխատանքների գծագրող եւ ձեւաւորող Արփինէ Յովսէփեանին եւ «Փարոս» ասմունքի խմբի անդամուհիներին:

Ծրագիրն աւարտուեց առաջնորդ գերշ. Սրբազան Հօր հայրական պատգամով: Գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանն սկզբում գնահատեց հայ մշակոյթի ամսեայ վերջալոյսին կազմակերպուած գրական-երաժշտական երեկոյի ծրագիրը, առ այն, որ ձեռնարկը հանդիսատեսին հաղորդ դարձրեց հայ անմահանուն բանաստեղծներին, մտաւորականներին եւ երաժիշտներին: Նա գնահատանքի խօսք ուղղեց նաեւ Բարեգործական ընկերութեանը եւ երեկոյի դերակատարներին, ովքեր զարկ տալով դաստիարակչական աշխատանքներին, նոր սերնդի մէջ սէր ու ոգի են արթնացնում հայկական արժէքների նկատմամբ:

Այնուհետեւ գերշ. Սրբազան Հայրն իր ուրախութիւնն յայտնեց ծրագիրը Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած լինելու կապակցութեամբ եւ նշեց. «*Նման միջոցառումներ ասում են, թէ որքան էլ թշնամին փորձի ոչնչացնել հայ ազգին, հայ լեզուն եւ հայկական դարաւոր մշակոյթը, նրան չի յաջողւելու։ Եւ այսօրւայ միջոցառումը դրա վառ ապացոյցն է։ Այն փաստում է, որ մենք գոյատեւելու ենք՝ որպէս ազգ եւ մեր մշակոյթը շարունակելու է ծաղկել իր արւեստի հանճարների շնորհիւ*»։

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ-ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՎ ՆՇՒԵՑ ՀԱՅ ՈՒՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 24-ԱՄԵԱԿԸ

Հինգշաբթի՝ սեպտեմբերի 24-ի երեկոյեան ժամը 6-ին, նախաձեռնութեամբ Հայ ուս. Զհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան եւ համագործակցութեամբ մասնաճիւղի Ձեռնարկային յանձնախմբի ու Երիտասարդական միաւորի, տեղի ունեցաւ սոյն մասնաճիւղի նոր կենտրոնատեղիի բացման արարողութիւնը՝ ներկայութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի, արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ.Գալստանեանի, արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանի, ազգային մարմինների, Հայ ուս. Զարմահալ միութեան կենտ. վարչութեան եւ քոյր միութիւնների ներկայացուցիչների, մասնաճիւղի անդամների եւ մի շարք այլ հրաւիրեալների:

Սկզբում կենտրոնատեղիի մուտքի ժապաւէնը հատուեց՝ Սրբազան Հօր, Հայ ուս. Զարմահալ միութեան

կենտրոնական վարչութեան նախագահ Նիկոլ Մուսախանեանի եւ նոյն միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի վարչութեան նախագահ՝ Վրթանէս Մկրտչեանի միջոցով: Ապա թեմական առաջնորդն օրհնեց աւանդական աղուհացը, որը մատուցեց Զհարմահալ գաւառի տարազով զգեստաւորուած անդամուհի Վանէ Թորոսեանի միջոցով, որից յետոյ բոլորին առիթ ընձեռեց մօտիկից ծանօթանալու նոր կենտրոնատեղիի տարբեր բաժիններին եւ հնարաւորութիւններին:

Երեկոն շարունակուեց կենտրոնատեղիի բակում, Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-ամեակին նուիրուած դասախօսական-գեղարուեստական միջոցառմամբ՝ սկիզբ առնելով Հայաստանի Հանրապետութեան հիմնի յոտնկայս ունկնդրութեամբ:

Այնուհետեւ բացման խօսքով հանդէս եկաւ մասնաճիւղի վարչութեան անդամ Նոռա Շահիջանեանը, ով վարչութեան անունից բարիգալստեան խօսք ուղղելով ներկաներին, յայտնեց, որ այսօր միութեան համար տօնախմբութեան, ուրախութեան եւ խնդութեան օր է, քանի որ թեմի նախորդ եւ ներկայի Թեմական խորհուրդների շնորհիւ նոր կենտրոնատեղի է տրամադրուել միութեանը եւ այդ ուրախութիւնը բազմապատկւում է՝ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-ամեակին զուգադիպելով:

Առիթը զարդարող խօսքեր հնչեցին հանդիսավարներ Գեղանի Ղարիբեանի եւ Մարինէ Մկրտչեանի միջոցով, որից յետոյ բեմ հրաւիրուեց օրուայ բանախօս, Հայ Ուսում. Զհարմահալ միութեան անդամուհի, Թեհրանի «Էլպիս Ֆերահեան» մանկապարտէզ-նախակրթարանի տնօրէն եւ վաստակաւոր ասմունքող ու արուեստագէտ՝ Այրինա Նորաւեանը:

Բանախօսն ակնարկ ունենալով Հայ ուս. Զհարմահալ միութեան հիմնադրմանը՝ նշեց. «1930-*ին մի խումբ երիտասարդներ Աբադանում հիմնադրում են Հայ ուս. Զհարմահալ միութիւնը՝ նպատակ ունենալով զարգացնելու Զհարմահալ գաւառի դպրոցների ու եկեղեցիների աշխատանքը, հոգ տանելու տեղի կրթադաստիարակչական հարցերի նկատմամբ եւ ժողովրդի մէջ զարգացնելու ընթերցանութիւնը։ Միութիւնը տարբեր շրջաններում, ինչու չէ նաեւ Նոր Ջուղայում, հիմնադրում է մասնաճիւղեր։ Այնուհետեւ ժամանակի պայմանների թելադրանքով իր գործունէութիւնը կենտրոնացնում է հայապահպանման ուղղութեամբ՝ ծառայելով ոչ միայն Զհարմահալ գաւառի ժողովրդին ու երիտասարդներին, այլ նաեւ միւս համայնքներին*»։

Այնուհետեւ տկն. Նորաւեանն ընդգծելով, որ ներկայ պայմաններում միութիւնները մեծ աշխատանք ունեն՝ իրենց կառոյցները երիտասարդացնելու եւ արդիականացնելու առումով, անդրադարձաւ սփիւռք-հայրենիք փոխյարաբերութիւններին եւ շեշտելով, որ պատմութեան տարբեր հանգրուաններում հայը միշտ եղել է ազգային արժէքները պահպանելու ուղղութեամբ պայքար մղող ազգ, բոլորին հրաւիրեց աւելի լայն խորհելու սփիւռքում եւ հայրենիքում ապրող հայութեան գոյատեւման սկզբունքների, երիտասարդների մօտ ազգային ինքնութեան պատկերացման եւ հայութեանը միաւորող գործօնների մասին:

Այրինա Նորաւեանն իր խօսքն աւարտեց հայ ժողովրդին ուղղուած Պարոյր Սեւակի բանաստեղծութեամբ:



Ծրագրի շարունակութեան մէջ բեմ հրաւիրուեց նաեւ Հայ ուս. Զհարմահալ միութեան կենտ. վարչութեան նախագահ Նիկոլ Մուսախանեանը, որը երախտագիտ-

թեան խօսք ուղղելով առաջորդ Սրբազան Հօրը եւ Սպահանի հայոց թեմի ազգային մարմիններին՝ կենտրոնատեղիի տրամադրման կապակցութեամբ, համոզում յայտնեց, որ այսուհետ միութենականներն աւելի նուիրուածութեամբ են լծուելու իրենց ազգանուէր աշխատանքներին:

Ներկաներին իր հայրական պատգամն ուղղեց թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը, ով Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-րդ տարեդարձը ուրախութեան առիթ համարելով, ասաց.- «*Այս ամեակները մեծ պարտաւորութիւն են դնում իւրաքանչիւրիս ուսերին։ Դրանք գալիս են մեզ պարտաւորեցնելու հայրենիքի նկատմամբ։ Գալիս են հայրենիքին զօրակցելու ուղղութեամբ մեր պարտականութիւնն աւելացնելու եւ սրբազան հողի նկատմամբ մեր սէրն ու յարգանքն առաւել ամրացնելու համար*»։ Խօսքի շարունակութեան մէջ Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնելով Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից միութեան մասնաճիւղին նոր կենտրոնատեղի յատկացնելու կապակցութեամբ եւ միութենականներին բեղուն գործունէութիւն մաղթելով, աւելացրեց, որ միութիւններն իրենց աշխատանքներով պէտք է կարողանան նոր սերնդի մօտ հայրենիքի, եկեղեցու, հոգեւոր ու ազգային արժէքների եւ սրբութիւնների նկատմամբ եղած սէրը շատացնել:

Ընթացքում արտայայտուեց Հայ ուս. Զհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի վարչութեան նախագահ Վրթանէս Մկրտչեանը, որն իր հերթին շնորհաւորելով առիթների կապակցութեամբ, երախտագիտութեան խօսք ուղղեց Թեմական խորհրդին՝ կենտրոնատեղիի տրամադրման կապակցութեամբ, երեկոյի կազմակերպման գործում իրենց սերտ համագործակցութիւնը ցուցաբերած անհատներին, ինչու չէ նաեւ Հայ ուս. Զհարմահալ միութեան Կենտ. Վարչութեան ներկայացուցիչներին՝ հրաւէրին ընդառաջելու եւ ծրագրին մասնակցելու համար:

Յատկանշական է, որ միջոցառումը գեղեցկօրէն ընդմիջւում էր գեղարուեստական կատարումներով, որի ընթացքում ելոյթ ունեցան մասնաճիւղի անդամներ՝ Վեհանուշ Խուդաբախշեանը, ասմունքելով Վահագն Դաւթեանի «Պարտք» եւ Կարէն Խանլարեանը՝ Շիրազի «Հրաշք» բանաստեղծութիւնները:

Երգերի մենակատարմամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախմբի անդամուհի Ժաքլին Պօղոսեանը՝ ղեկավարութեամբ նոյն երգչախմբի խմբավար Համիկ Ալեքսանդրեանի: Մեներգչուհուն երգեհոնի նւագակցութեամբ ընկերակցում էր Ալբերտ Ղազարեանը:

Ընթացքում դարձեալ կենդանի երաժշտութեան ներքոյ հնչեց երգերի շարան «Ասուպ» երաժշտական խմբի կատարմամբ, որին անդամակցում էին Վահէ Կարապետեանը, Դրօ Տէր-Մարտիրոսեանը, Սերօ Տէր-Մարտիրոսեանը, Վահան Վարդեւանեանը, Ադրիան Դաւթեանը եւ Հայկ Խոսրովեանը:

Վերջում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՕՆԻՆ ՆՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ՝ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Շորեքշաբթի՝ հոկտեմբերի 28-ի երեկոյեան ժամը 7-ին, Փերիոյ կրթասիրաց միութեան կենտ. վարչութեան նախաձեռնութեամբ, նոյն միութեան կենտրոնատեղիում տեղի ունեցաւ Հայ մշակոյթի օրուան նուիրուած միջոցառում, որին ներկայ էին Փերիոյ կրթ. միութեան Շահինշահիր ու Հայ ուս. «Զհարմահալ» միութեան Նոր Զուղայի մասնաճիւղերի վարչութիւնների ներկայացուցիչները, Փերիոյ կրթ. միութեան անդամներն ու հրաւիրեալներ:

Ծրագրի սկզբում Ռիմա Զաքէոսեանը Փերիոյ կրթ. միութեան կենտ. վարչութեան անունից ողջոյնի խօսք ուղղեց ներկաներին, ապա նշելով, որ երեկոյի գեղարուեստական բաժնի պատասխանատուն է Զարենուշ Աղուրեանը, աւելացրեց, թէ տէր եւ տկն. Ժոզեֆ եւ Զարենուշ Գրիգորեանները, ջանք ու եռանդ չխնայելով, միշտ սատար են հանդիսացել միութեանն իր աշխատանքների կազմակերպման գործում:

Այնուհետեւ օրուայ հանդիսավար Զարենուշ Աղուրեանն իր խօսքում ներկայացրեց Հայ մշակոյթի պատ-

մութիւնը, իւրայատուկ ակնարկ ունենալով հայկական խաչքարերին, իսկ անդրադառնալով ոսկեդարին՝ ներկայացրեց նաեւ Ս. Մեսրոպ Մաշտոցի կենսագրութիւնը եւ հայ գրերի ստեղծման ընթացքը:

Ձեռնարկի շարունակութեան մէջ իրականացուեց գեղարուեստական ծրագիր, ուր Հայոց լեզուին նուիրուած բանաստեղծութիւնների ասմունքներով հանդէս եկան՝ Սոնիա Դիլանչեանը, Վերգինէ Համբարձումեանը եւ Արգին Յովսէփեանը, իսկ Ժաքլին Պօղոսեանն ու Զարենուշ Աղուրեանը հանդէս եկան երգերի մենակատարմամբ՝ Արին Խաչիկեանի երգեհոնի նուագակցութեամբ:

Յաջորդիւ բեմ հրաւիրուեցին ու գնահատուեցին երեկոյի կազմակերպման գործում բոլոր դերակատար անհատները, իսկ կենտ. վարչութեան անունից յատուկ շնորհակալագիր յանձնուեց տէր եւ տկն. Արարատ եւ Ժաքլին Քեշիշեաններին, ովքեր իրենց նիւթա-բարոյական օժանդակութիւններով միշտ սատար են հանդիսացել միութեանը:

Ծրագրի աւարտին Փերիոյ կրթ. միութեան կենտ. վարչութեան նախագահ Հայկ Հայրապետեանը կենտ. վարչութեան անունից շնորհակալական խօսք ուղղեց ներկաներին ու մասնակիցներին: Նա իր խօսքերում անդրադարձ ունենալով յատկապէս հայ մշակոյթին՝ կարեւորութեամբ ընդգծեց, որ հայ ազգն ունի այնպիսի մշակոյթ, որը վեր է կանգնած բոլոր թագաւորութիւններից եւ դա մեր գրերի, գրքերի եւ ճարտարապետութեան անվերջանալի հարստութիւնն ու թագաւորութիւնն է:

Վերջում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շաբաթ, սեպտեմբերի 5-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցած Կիրակնամուտի ժամերգութեան աւարտին, արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի միջոցով ընթերցուեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի պատգամը՝ ուղղուած հայ ժողովրդին:

Հայոց ցեղասպանութիւնից 100 տարի անց, սոյն պատգամով Վեհափառ Հայրապետը խոր յուզումով ե ւ անհուն վշտով անդրադառնում էր հայ ժողովրդի թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ հոգեմտաւոր անփոխարինելի կորուստներին եւ նիւթաբարոյական անդարձ արժէքներին, եւ յորդորելով հայորդիներին «Ցիշել, յիշեցնել ու պահանջել...» կարգախօսը՝ պահանջում էր միւռոնաբոյր հողի վրայ կանգնած Սիսի պատմական կաթողիկոսարանի վերադարձը:

Արարողութեանը ներկայ էին Հայ համայնքի վարչութեան ներկայացուցիչները, դպրաց դասը, եւ հաւատացեալներ:

Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆԻ 47-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Սեպտեմբերի 21-ի երեկոյեան ժամը 17:00-ին մասնաճիւղիս վարչութիւնը կազմակերպել էր գնահատանքի երեկոյ՝ միութեանս կողմից Իրանի 47-րդ Համահայկական խաղերին մասնակցած մարզիկ-ուհիների համար: «Սրբոց Վարդանանց» դպրոցի փոքր սրահում հիւրընկալուեցին մարզիկ-ուհիները եւ նրանց ծնողները:

Մասնաճիւղի վարչութեան նախագահ՝ Գեւիկ Խաչատրեանը ողջունեց ներկաներին եւ շնորհակալութիւն յայտնեց հրաւէրն ընդունելու համար:

Շահինշահրի մասնաճիւղի Մարզական միաւորը վերոյիշեալ խաղերին մասնակցեց ընդհանուր թւով 31 անդամով՝ 3 պատասխանատու, 2 մարզիչ եւ 26 մարզիկ-ուհիներ: Ներկայացաւ հետեւեալ՝ տղայոց street ball բասկետբոլի երկու խումբ, ճատրակի օրիորդաց եւ տղայոց), սեղանի թենիսի (տղայոց), լողի (տղայոց), թեթեւատլետի՝ սկաւառակի նետման (օրիորդաց եւ տղայոց), վազքի 4×100 մետր (օրիորդաց եւ տղայոց), 100 մետր (տղայոց), 5000 մետր (տղայոց), հեռացատկի (օրիորդաց եւ տղայոց), գնդի հրման, եւ նիզականետման (օրիորդաց եւ տղայոց) թիմերով:

Մարզախմբերի ընդհանուր պատասխանատուն էր Գեւիկ Խաչատրեանը, իսկ օրիորդաց թեթեւ ատլետի եւ ճատրակի պատասխանատուն Էմմա Օրդուբեգեանը, սեղանի թենիսի պատասխանատուն՝ Անիտա Խաչատրեանը, տղայոց ճատրակի պատասխանատուն՝ Արին Աբեդեանը, տղայոց թեթեւ ատլետի պատասխանատուն՝ Վահէ Թահմազեան:

Պրն. Գեւիկ Խաչատրեանը համառօտ եւ բովանդակալից ձեւով ներկայացրեց զեկոյց՝ ութօրեայ մրցութիւնների եւ բանակավայրում անցկացրած հետաքրքիր պահերի մասին:

Ծրագրի ընթացքում ներկաներին հնարաւորութիւն ընձեռնուեց հանդէս գալ առաջարկներով եւ հարցումներով:

Պրն. Գեւիկը նշեց, որ մարզիկ-ուհիները Թեհրանից վերադարձել են յաջողութիւններով՝ մէկ գաւաթով (թիմային օրիորդաց ճատրակ) եւ 10 մեդալներով:

Մարզիկները գրանցել են հետեւեալ յաջողութիւնները.

- Ճատրակ թիմային (օրիորդաց) գրաւել են առաջին տեղը եւ ստացել գաւաթ
- Ճատրակի 12-ից 18 տարեկանների տարիքային անհատական (տղայոց)՝ Արւին Մինասքանեան՝ երկրորդ, Արգին Խուդավերդեան՝ երրորդ
- Ճատրակի մինչեւ 18 տարեկանների (տղայոց) թիմային՝ երկրորդ
- Վազք (տղայոց) 5000 մետր՝ Սեւադա Իսաղուլեան՝ երկրորդ
- Վազք թիմային (տղայոց) 4×100 մետր՝ երրորդ
- Նիզականետում (տղայոց)՝ Գեւիկ Խաչատրեան՝ երրորդ
- Նիզականետում (օրիորդաց)՝ Արինէ Ամիրխանեան՝ երրորդ
- Սկաւառակի նետման (տղայոց)՝ Էդւին Փիլոսեան՝ երրորդ
- Տղայոց street բասկետբոլ Ա խումբ՝ չորրորդ

Պրն. Գեւիկը շնորհաւորեց ներկաներին ձեռք բերուած յաջողութիւնների համար: Այնուհետեւ կատարուեց մեդալաբախշում եւ վկայագրերի յանձնում:

Համեստ հիւրասիրութիւնից յետոյ բոլորը շտապեցին ցուցափեղկի մօտ, որի վրայ փակցուած էին Թեհրանում անցկացրած մրցութիւնների դրւագներից շուրջ 30 լուսանկարներ: Մասնակիցներն իրենց տպաւորութիւններով կիսեցին վարչութեան անդամների եւ ներկաների հետ, տիրում էր ջերմ եւ անկեղծ մթնոլորտ:

Վերջում մարզիկ-ուհիները պատասխանատուների հետ լուսանկարուեցին եւ ծնողները շնորհակալութիւն յայտնելով բարձր տրամադրութեամբ հեռացան:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ ՇԱՀԻՆՇԱՀԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

2015 թւականի սեպտեմբերի 22-ի առաւօտեան ժամը 8:30-ին, Շահինշահիի հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի առաջին դասարանցիները մեծ խանդավառութեամբ դպրոց էին շտապել՝ լսելու տարրական դպրոցի առաջին զանգի ղօղանջը:

Օրուայ արարողութեանը ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Վարչութեան ներկայացուցիչները, դպրոցի անձնակազմը եւ ծնողները:

Դպրոցի տեսուչ պրն. Ղոջավանդը շնորհաւորելով առաջին դասարանցիների մուտքը տարրական դպրոց՝ մի շարք անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց դպրոցի կանոնների կապակցութեամբ: Պաշտօնական արարողութեանը յաջորդեց մի համեստ հիւրասիրութիւն եւ այնուհետեւ փոքրիկները դպրոցի անձնակազմի կողմից ստացան գեղեցիկ նուէրներ: Շուրջ 2 ժամ դպրոցում հաճելի պահեր անցկացնելուց յետոյ՝ նորամուտ աշակերտները մեկնեցին տուն՝ պատրաստուելու յաջորդ օրը՝ ուսումնական տարեշրջանը պաշտօնապէս սկսելու համար:

Իսկ 2015 թւականի սեպտեմբերի 23-ի առաւօտեան ժամը 8-ին, Շահինշահիի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների աշակերտութիւնը դիմաւորեց ուսումնական նոր տարեշրջանը հոգշ. Հայր Սուրբի, Վարչութեան, շրջանի կրթադաստիարակչութեան հիմնարկի պատուիրակութեան, զոյգ դպրոցի անձնակազմի եւ ծնողների ներկայութեամբ:

Բարիգալստեան խօսքով հանդէս եկաւ դպրոցի տեսուչը, ով մաղթելով աշակերտներին կանաչ ճանապարհ, խօսքը փոխանցեց հոգշ. Հայր Սուրբին: Վերջինս իր հայրական խօսքն ուղղելով սիրելի աշակերտներին պատգամեց նրանց՝ հայ քրիստոնեայ աշակերտին վայել՝ սիրել, յարգել եւ մեծարել միմեանց:

Հոգշ. Հայր Սուրբի պատգամին յաջորդեց շրջանի Կրթա-դաստիարակչութեան հիմնարկի պաշտօնատար պրն. Աբդոլլահի ողջոյնի խօսքը, որն եւս իր հերթին քաջառողջութիւն եւ յաջողութիւն մաղթելով աշակերտներին՝ իր շնորհակալութիւնը յայտնեց դպրոցի պատասխանատուներին, համայնքի Վարչութեանն ու ծնողներին, որոնք մեծ հոգատարութեամբ համագործակցել են վերոնշեալ հիմնարկութեան հետ՝ ամէն ջանք ի սպաս դնելով աշակերտների կրթադաստիարակչական մակարդակը զարգացնելու ուղղութեամբ:

Օրուայ առիթով գեղեցիկ խօսքով եւ ասմունքով արտայայտուեցին աշակերտ-ուհիներ Վաչէ Քեշիշեանը, Արմիկ Մատթէոսեանը եւ Բիւրա Մինասեանը:

Նոյն օրն առաւօտեան ժամը 10:30-ին, դպրոց շնորհ բերեց Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ՝ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը՝ Թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական, Կրօնական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչների ուղեկցութեամբ: Գերշ. Սրբազան Հայրն օրհնելով աշակերտներին նրանց յորդորեց սովորել ջանասիրութեամբ, իսկ խօսքն ուղղելով ծնողներին դրատեց նրանց՝ հայոց դպրոցին անվերապահ վստահելու եւ հետեւաբար իրենց սիրասուն աշակերտներին հայոց դպրոց ուղարկելու համար:

Ապա ակնարկելով «Սրբազան Պաշտպանութեան Շաբաթաւն» մեծ ակնածանքով յիշեց սուրբ նահատակների եւ քաջ մարտիկների աննկուն պայքարը՝ Իրանի նիւրական հողը եւ ամբողջականութիւնը պաշտպանելու համար:

Հանդիսաւոր բացման աւարտին Սրբազան Հօր ձեռամբ հնչեց տարեմուտի առաջին զանգը եւ նախատեսուած համեստ հիւրասիրութիւնից յետոյ աշակերտ-ուհիները մեծ խանդավառութեամբ շտապեցին դէպի դասարանները:

Այնուհետեւ Սրբազան Հայրը եւ նրան ուղեկցող պատուիրակութիւնը ներկայացան համայնքի «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարան՝ որտեղ նոյն խանդավառութեամբ իրենց էին սպասում դպրոցի սաները, պատասխանատուները եւ ծնողները: Այնտեղ եւս թեմական առաջնորդն իր հայրական օրհնանքը փոխանցեց ներկաներին եւ իր ձեռամբ հնչեցրեց տարեմուտի առաջին զանգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ 24-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-ամեակը Շահինշահրում նշուեց հինգշաբթի՝ թւականիս սեպտեմբերի 24-ի երեկոյեան, համայնքի «Սրբոց Վարդանանց» դպրոցի շրջափակում, ներկայութեամբ Սպահանի հայոց թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանի, համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, Թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական խորհրդի, Հայ համայնքի վարչութեան եւ հոծ թւով ժողովրդի:

Հայաստանի Հանրապետութեան հիմնը յոտնկայս ունկնդրելուց յետոյ, Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-ամեակի տօնախմբութեան Շահինշահրի յանձնախմբի անունից հանդէս եկաւ օրդ. Անայիս Դաւութեանը՝ օրուան պատշաճ խօսքերով:

Այնուհետեւ բանախօսութեամբ ելոյթ ունեցաւ ազգային վաստակաւոր գործիչ պրն. Վրէժ Շիրւանեանը, որն օրուայ առիթով իր շնորհաւորման խօսքն ուղղելով բոլոր ներկաներին՝ նախ հպանցիկ ակնարկ նետեց հայ ժողովրդի վերջին 100 տարուայ պատմութեան վրայ, ապա անդրադառնալով վերանկախացման 24 տարիների ընթացքում արձանագրուած բազմաթիւ նւաճումներին, նշեց նաեւ մի շարք կորուստներ, որոնցից ամենացաւալին Հայաստանից աւելի քան մէկ միլիոն հայերի հեռանալու իրողութիւնն է: Նա իր խօսքում յիշատակեց. «*Երբ հայերը հեռանում են հայրենիքից, դա նշանակում է, որ ինչ որ բան սխալ է: Այսօր էլ Հայաստանի պետականութեան ամենայուրջ մարտահրաւէրը հէնց արտագաղթն է… Այսօր Հայաստանի բնակչութեան շուրջ 40 տոկոսն աղքատ է: Անկախութեան հանդէպ վերապահումների պատճառը ոչ այնքան աղքատութիւնն է, որքան այն յոռի բարքերը, որոնք եկան անկախութեան հէնց առաջին օրերից եւ դարձան շարքային հայ քաղաքացու ու կեանքի ու կենցաղի անքակտելի մասը*»: Մեծարգոյ բանախօսը եզրափակեց իր ելոյթը հետեւեալ տողերով. «*Միայն կառավարման համակարգի փոփոխութեամբ է, որ հնարաւոր է վստահութիւն ներշնչել մեր անկախութեան հանդէպ եւ դեռ աւելին՝ լուծել ազգային գերխնդիրները: Բայց պէտք է գիտակցենք, որ ի վերուստ ոչինչ տրուած չէ, ուստի մենք մեր ապագան պէտք է կերտենք Հայաստանով, Արցախով, Զաւախքով, սփիւռքով միասնաբար, մի խօսքով՝ ազգովին*»:

Բանախօսութիւնից յետոյ ներկաներին իր օրհնանքը տուեց գերշ. Սրբազան Հայրը, ով գնահատելով բովանդակալից բանախօսական ելոյթը շնորհաւորեց Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 24-ամեակը եւ նշեց. «*Հայաստանի բոլոր իշխանութիւններն ու ղեկավարութիւնը պէտք է մտածեն ժողովրդի մասին, ժողովրդի հետ լինեն ու ժողովրդի համար լինեն, որպէսզի կարողանան պետութիւնը օրըստօրէ առաւել հզօրացնեն, Հայաստան աշխարհն աւելի պայծառացնեն… Սփիւռքի մէջ պէտք է մեր բոլոր ջանքերն ի սպաս դնենք Հայաստանի հզօրացման համար*»:

Բանախօսութիւնց յետոյ, Նոր Զուղայից հրաւիրուած «Անի» ստրադային նւագախմբի միջոցով կատարուեցին ազգային-հայրենասիրական եւ ժողովրդական երգեր, որոնք առաւել ոգեշնչեցին ներկաներին՝ բարձրացնելով նրանց տօնական տրամադրութիւնը:

Ծրագրի աւարտին հանդիսավարը յանձնախմբի անունից շնորհակալութիւն յայտնեց Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութեանը եւ օրդ. Աւենիա Տէր-Մինասեանին՝ իրենց ցուցաբերած համագործակցութեան համար:

ՋՐՕՐՀՆԷՔԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շաբաթ՝ 2015 թւականի հոկտեմբերի 3-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, Կիրակնամուտի արարողութեան ընթացքում տեղի ունեցաւ Ջրօրհնէքի սրբազան արարողութիւն՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ յուլիսի 18-ին Բիքֆայայում նոր օրհնուած Ս. Միւռոնով:

Կրօնական արարողութիւնը նախագահեց Թեմիս բարեջան առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն արք. Զարեանը՝ ներկայութեամբ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, Հայ համայնքի վարչութեան, դպրաց դասի, Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմի եւ հոծ թւով հաւատացեալների:

Յաւարտս Ս. Պատարագի գերշ. Սրբազան Հայրն իր պատգամում նախ կարեւորեց քրիստոնեայի համար երեք հիմնական կէտը՝ հաւատը, յոյսը եւ սէրը. հաւատ առ Աստուած, յոյս՝ յաւիտենական կեանքի ու փրկութեան հանդէպ, եւ սէր՝ Աստծու կողմից տրուած իւրաքանչիւր մարդու նկատմամբ, որովհետեւ ինքը՝ Աստուած կատարեալ սէր է: Ապա աղօթեց հայ ժողովրդի զաւակների հաւատի զօրութեան համար, որպէսզի հայորդիներն Աստծու շնորհներով զարդարուած ապրեն գիտակից, առաքինի եւ պարկեշտ կեանք:

Գերշ. Սրբազան Հայրն ընդգծելով Անթիլիասում Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարուած Միւռոնօրհնէքի արարողութիւնը՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին, յոյս յայտնեց, որ իւրաքանչիւր հայորդի խմելով այս նոր օրհնուած ջուրը, զօրանայ իր հաւատով, յոյսով եւ սիրով՝ իր քրիստոնէավայել կեանքը ապրելու, պայքարելու, յաղթահարելու ամէն տեսակի ճնշուածութիւն եւ շարունակելու մեր գոյապայքարը, հասնելու մեր արդար իրաւունքներին, ազատ ու անկախ ապրելաձեւին:

Թեմական առաջնորդի պատգամն աւարտելուց յետոյ, օրհնուած ջուրը բաժանուեց հաւատացեալների միջեւ:

ՄԵԴԱԼԱԲԱՇԽՄԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Նախաձեռնութեամբ Փերիոյ կրթասիրաց միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան, 2015 թւականի հոկտեմբերի 8-ի երեկոյեան ժամը 7:00-ին, «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում կազմակերպւել էր մեդալաբաշխման եւ գնահատման երեկոյ՝ Իրանի 46 եւ 47-րդ Համահայկական խաղերին մասնակցած մարզիկ-ուհիների պատուին: Ծրագրին ներկայ էին համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Փերիոյ կրթասիրաց միութեան կենտրոնական եւ մասնաճիւղի վարչութիւնների անդամները, Համայնքի վարչութեան ներկայացուցիչները, մարզիկ-ուհիները եւ ծնողները:

Բարիգալստեան խօսքով ներկաներին ողջունեց միութեան անդամ տկն. Գայիանէ Վարդանեանը, որը հրաւիրեց մասնաճիւղի նախագահ պրն. Զանիկ Թահմազեանին օրհնեալ առիթով արտայայտուելու: Վերջինս եւս ողջունելով բոլորին՝ ամփոփ զեկոյց ներկայացրեց 46 եւ 47-րդ համահայկական խաղերի ընթացքում մասնաճիւղի մարզական միաւորի արձանագրած յաջողութիւնների մասին: Ապա մաղթելով նորանոր ձեռքբերումներ՝ յոյս յայտնեց, որ յա-

որ յաջորդ մրցախաղերում անշուշտ աւելի կազմակերպւած ու ծրագրւած պիտի մասնակցեն: Ըստ պրն. Թահմազեանի փոխանցած զեկոյցի, այս շրջանին մասնաճիւղից 17 մարզիկ-ուհի իրենց մասնակցութիւնն են ցուցաբերել շախմատի, թեթեւ ատլետի, հեռացատկի եւ գնդի հրում մարզաձեւերին եւ արձանագրել որոշակի յաջողութիւններ: Նա մասնաճիւղի անունից շնորհակալութիւն յայտնեց Սպահանի հայոց թեմի թեմական խորհրդին եւ կենտրոնական վարչութեանը՝ մասնաճիւղին նիւթապէս եւ բարոյապէս միշտ զօրավիգ հանդիսանալու համար:

Երեկոյի ընթացքում հնչող բարեմաղթանքներին միացան Փերիոյ կրթասիրաց միութեան կենտրոնական վարչութեան նախագահ՝ պրն.Հայկ Հայրապետեանը եւ համայնքի Վարչութեան անդամ պրն. Ռազմիկ Մարկոսեանը, որոնք գնահատելով մասնաճիւղի արձանագրած յաջողութիւնները, նոր վերելքներ մաղթեցին միութենականներին:

Այնուհետեւ հոգշ. Հայր Սուրբի ձեռամբ իրենց մեդալները եւ վկայագրերը ստացան մարզիկ-ուհիներ Թէոդիկ Մանուկեանը, Վաչէ Քեշիշեանը, Արիւն Մինասքանեանը, Դերիկ Թահմազեանը, Սոնա Մնացականեանը, Անի Մնացականեանը, Սերինէ Աղախանեանը, Հելգա Քեշիշեանը, Մելանիա Թորոսեանը, Ադանա Այւազեանը, Արայիկ Թահմազեանը, Սանասար Թահմազեանը, Արայիկ Խուդավերդեանը, Վանանդ Մինասքանեանը, Նարեկ Մինասքանեանը, Արայիկ Թահմազեանը, Նորվան Աղախանեանը, Կարէն Շահմիրզայեանը, Նոռա Աղախանեանը եւ Աւենիա Տէր-Մինասեանը:

Գնահատանքի արժանացան նաեւ Միութեան աշխատանքներում իրենց օժանդակութիւնը ցուցաբերած մասնաճիւղի անդամներ Նինարէ Թահմազեանն ու Սերինէ Աղախանեանը, իսկ շախմատի ոլորտում մարզիկ-ուհիներին իր ուսուցողական ցուցումներով եւ խորհուրդներով օժանդակած՝ Կարէն Շահմիրզայեանը:

Իր հայրական պատգամում հոգեշնորհ Հայր Սուրբը բարձր գնահատելով մարզիկ-ուհիների մասնակցութիւնը 46 եւ 47-րդ Համահայկական խաղերին՝ իր դրւատանքի խօսքն ուղղեց առաջին հերթին Փերիոյ կրթասիրաց միութեան Կենտրոնական Վարչութեանը, որը թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս, միշտ նեցուկ է հանդիսացել մասնաճիւղի իրագործած աշխատանքներին, ապա մասնաճիւղի պատասխանատուներին եւ ծնողներին, որոնք խրախուսում են մարզիկ-ուհիների մասնակցութիւնը մրցախաղերին եւ վերջում համայնքի շնորհալի մարզիկ-ուհիներին, ովքեր լաւապէս գիտակից են իրենց համայնքը լաւագոյնը ներկայացնելու միւս հայ համայնքների մօտ:

Ծրագրի պաշտօնական բաժինն աւարտւելուց յետոյ, երեկոն շարունակւեց ջերմ մթնոլորտում՝ հայկական ուրախ երաժշտութեան ներքոյ, որի ընթացքում բոլոր ներկաները վայելեցին օրւայ առիթով նախապատրաստւած պատշաճ հիւրասիրութիւնը: Հաճելի երեկոն աւելի նշանաւորւեց մի անակնկալով, երբ մասնաճիւղի Վարչութիւնը գեղեցիկ կարկանդակով յայտնւեց եւ ուրախ բացականչութիւնների ու ծափողջոյնների ձայնակցութեամբ նշւեց մասնաճիւղի հիմնադրման 24-ամեակը:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ թւականիս հոկտեմբերի 11-ի առաւօտեան, Սրբոց Թարգմանչաց տօնի առիթով Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցւեց Ս. եւ անմահ Պատարագ՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ, արժն. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի մասնակցութեամբ եւ «Նարեկ» երգչախմբի երգեցողութեամբ:

Օրւայ խորհրդին ներկայ էին Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւնը, Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամները, «Նարեկ» մանկապարտէզ-նա-խակրթարանի, «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմերն ու աշակերտութիւ-նը, ծնողները եւ համայնքի անդամները:

Օրւայ առիթով հոգշ. Հայր Սուրբն իր մեծարանքի խօսքն ուղղելով հայ գիր ու գրականութեան հիմնադիր՝ Ս. Մեսրոպ Մաշտոցին եւ թարգմանիչ վարդապետներին՝ յորդորեց հայ աշակերտներին անաղարտ պահել հայոց լեզուն, բարձր պահել հայ գիրն ու գրականութիւնը եւ դարերի խորքից ժառանգած մշակութային գանձարանը: Նա ինչպէս միշտ պատգամեց հայ աշակերտին, հայ ծնողին եւ առհասարակ իւրաքանչիւր հայորդու հանդիսանալ հայ լեզւի ու գրականութեան ջահը վառողը, մեծ յանձնառութեամբ պահել ու պահպանել մեսրոպեան աւանդը, լինել ազգասէր, հայրենասէր եւ հայ մշակոյթի

ջատագովն ու տարածողը: Նա իր խոսքում ընդգծեց. «*Արդի աշխարհում օտար մշակոյթներին կուլ չգնալու համար պահանջւում է իւրաքանչիւր հայորդի առանձնակի ուշադրութիւն դարձնի սեփական ազգային-մշակութային եւ կրօնական արժէքների վրայ*»:

Հայր Սուրբն իր խօսքը եզրափակեց բոլոր ներկաներին շնորհաւորելով Սրբոց Թարգմանչաց տօնը, Հայ Մշակոյթի օրը եւ Հայ Ուսուցչի տօնը, այնուհետեւ բարձր գնահատելով արժն. Տ. Մեսրոպ աւ. Քհնյ. Գալստանեանի երկար տարիների կատարած քահանայական ծառայութիւնը՝ համայնքիս, շնորհաւորեց Քահանայ Հօր անւանակոչութեան տօնը՝ մաղթելով նրան երկարակեցութիւն եւ քահանայական բարի ծառայութիւն:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, հոգշ. Հայր Սուրբն այցելեց «Սրբոց Վարդանանց» դպրոցը, որտեղ աշակերտ-ուհիները ուսուցչական կազմի նախաձեռնութեամբ, օրւայ առիթով պատրաստած ելոյթով ջերմօրէն դիմաւորեցին նրան՝ ձօնելով իրենց երգ ու ասմունքը հայ դպրութեան հիմնադիրների փառաւոր յիշատակին:

Գեղարւեստական ելոյթի աւարտին աշակերտ-ուհիները լուսանկարւեցին հոգշ. Հայր Սուրբի հետ:

ՏԱՏԻԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՊԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ՝ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շորեքշաբթի՝ 2015 թւականի հոկտեմբերի 14-ի առաւօտեան, Շահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի նախաձեռնութեամբ՝ շրջագայութիւն էր կազմակերպւել պապիկների եւ տատիկների համաշխարհային օրւայ առիթով: Այս գեղեցիկ օրը մանկապարտէզի սաներն իրենց պապիկների եւ տատիկների հետ միասին զւարճալի պահեր վայելեցին զբօսայգում:

Թէպէտ դպրոցի անձնակազմի կողմից նախօրօք, ժամանակին նշւել էր «Մանուկների համաշխարհային օրը», սակայն առիթը պատեհ համարելով, միջոցառումն անդրադարձ ունեցաւ նաեւ վերոյիշեալ օրւան:

Օրւայ առիթով կազմակերպւել էին հաճելի խաղեր, մրցոյթներ եւ անակնկալներ, որոնց մեծ սիրով ընդառաջեցին մասնակիցները՝ դրսեւորելով իրենց ձիրքն ու մրցունակ տաղանդը: Եւ փոխադարձաբար արժանացան կազմակերպիչների բարձր գնահատանքին:

Միջոցառման ընթացքում, բոլորը վայելեցին նախատեսւած համեստ հիւրասիրութիւնը:

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԱՒԱՆԴՈՅԹՆԵՐԻ ՑՈՒՅԱՀԱՆԴԷՍ ՓԵՐԻԱՅՈՒՄ

Երկուշաբթի՝ 2015 թւականի հոկտեմբերի 12-ին, Սպահան նահանգի Փերիա գաւառի Բուին-Միանդաշտ շրջանի Աղչա գիւղի «Սաադի» շէնքում տեղի ունեցաւ շրջանի գիւղերին եւ գաւառում բնակւող զանազան ազգերին յատուկ ցուցահանդէս, որտեղ ներկայացւած էին խոհանոցը, աշխատանքային գործիքներ եւ իրեր, տնային

տնտեսութեան գոյքեր, զգեստներ, հողագործութեանը պատկանող դասական եւ ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ցուցահանդէս այցելեցին պետական պատասխանատու անձինք՝ գաւառապետ պրն. Մաշալլահ Թահանենզադեհը, նահանգապետի ներկայացուցիչ եւ գիւղական շինարարութեան (Օմռան ռուսթայի) պատասխանատու պրն. Իսա Բահմանին եւ ուրիշներ:

Սոյն ցուցահանդէսին, Բոլորան եւ Խոյգան գիւղերի հայ գիւղացիները եւս մասնակցել էին՝ ցուցադրելով հայկական խոհանոցի համադամ կերակրատեսակները, կաթնեղէն, ձեռարուեստի տեսակներ՝ ձեռագործ գորգեր, զանազան տեսակի հիւսուածեղէն, ձեռագործ կօշիկ (սօռ), աւանդական տարազ, խեցեղէն կահկարասիներ, գորգագործութեան սարք եւ գոյքեր, Աստուածաշունչ, «Ալիք» օրաթերթի հայերէն եւ պարսկերէն հրատարակութիւն:

Ցուցահանդէսին մասնակցած հայ կանայք ներկայացել էին Փերիոյ շրջանի հայկական տարազով:

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

Մ. Գէորգ եկեղեցի

- 100 Ա.Մ.Ն. դոլար. Ուրֆա Անդրիասեան
- 1,970,000 ռիալ. Շայեան
- 1,000,000 ռիալ. Զանդի, ոմն
- 500,000 ռիալ. Անի Յակոբեան, Աքռամ
- 100,000-ական ռիալ. Մուշեղ Այւազեան, Ժանեթ Այւազեան, Փաժմ

Անւանակոչութեան տօն

- 5,000,000 ռիալ. Գառնիկ Փափէլեան
- 4,000,000 ռիալ. ոմն
- 2,000,000 ռիալ. Գեւիկ Շահբազեան
- 1,500,000-ական ռիալ. Զաւէն Կիրակոսեան, Սուրէն եւ Արմենուհի Խուդաւերդեաններ, Սերժիկ, Ադրինէ, Խաչիկ, Էմինի եւ Էմանուէլ Յարութիւնեաններ, Մահիդ Թասլիմի
- 1,100,000 ռիա. Շաքէ եւ Նայիրի Խաբազեաններ
- 1,000,000-ական ռիալ. Հայկուշ Խաչիկեան, Արբի, Թալին, Էմին եւ Նելի Թորոսեաններ, Թորոսեան ընտանիք, Ծաղկուշ Համբարչեան, Սեւակ Թահմազեան, Մովսիսեան, Վահիկ Օրոջեան, Իռա Քիմքիքոյի մահւան տարելիցի առթիւ, Ազամ Շոմալի
- 600,000 ռիալ. Սարգսեան
- 500,000-ական ռիալ. Տ. Մեսրոպ աւ. Քհնյ. Գալստանեան, Բագրատ Սիմոնեան, Պօղոս Թահմազեան, Արմենակ Ծատուրեան, Մառիետ Խոջեմալ, Իմելդա Իսմայիլեան, Արդւի Զոհրաբեան, Վազգէն եւ Ադրինէ Թահմազեաններ, Բարֆեան ընտանիք, Վահիկ Թահմազեան, Վարդուշ Պօղոսեան, Նոյեմի եւ Լիա Մարկոսեաններ, Ժոզէֆ Թումասեան, Արին եւ Մհեր Դաւթեաններ, Մեղմիկ, Համիկ եւ Թանգիկ Միրզախանեաններ, Սթելա Դիլանչեան, Վարդուշ Յովհաննիսեան, Ալվարդ Զարգարեան, Խէչօ եւ Ժանեթ Խուդաւերդեաններ, Ռադիկ եւ Մայեա Նահապետեաններ, Աստղիկ Գրիգորեան, Շարիս եւ Անայիս Խպլդաւերդեաններ, Զանիկ Մարկոսեան, Արշամ Ղազարեան, Բաֆֆի եւ Արսէն Թորոսեաններ, Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ, Վազրիկ, Հրանուշ, Նորիկ, Նայիրի եւ Նինարէ Մարկոսեաններ, Ասպետ եւ Լորեթա Վարդանեաններ, Էլին Աբրահամեան, Լիդա Պետրոսեան, Մէրի Մինասքանեան, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ, Իռինա Խաչատրեան, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Արբի եւ Մելինա Բաբումեաններ, Նոէլ Աբգարեան, Գեւիկ Ասատրեան, Թադէ Կարապետեան, Թադէ եւ Թոմիկ Գալստանեաններ, Գայիանէ Գէորգեան, Մինաս Գէորգեան, Երւանդ Պօղոսեան, Թումանեան ընտանիք, Մայեա Դաւթեան, Բանա Բորումանդ, ոմն (3 պարագայ)
- 400,000-ական ռիալ. Միրօ Աբդալեան, Անի եւ Թենի Շահիջանեաններ, Մարօ Բաղումեան
- 300,000-ական ռիալ. Յարութ Ղուկասեան, Անահիտ Սարհադեան, Սաքօ Սիմոնեան, Լալա Բաղդասարեան, Նարեկ եւ Նինել Օրոջեաններ, Հենրիկ, Զինա եւ Մոնթէ Առաքելեաններ, Գեւօ Խաչատրեան, Ռոլանդ եւ Ժանեթ Ղարախանեաններ, Վահիկ Մկրտչեան, Նարինէ Քէշիշեան, Վահագն Մինասեան, Մեհրաբ Խաչիկեան, Արծուիկ Ղազարեան, Արութին եւ Անի Թորոսեաններ, Իվետ Օհանեան, Սերժ Համազասպ
- 250,000-ական ռիալ. Նարբէ եւ Անասիկ Կարապետեաններ, Աբգար Գրիգորեան, Նայիրի Միրզայեան
- 200,000-ական ռիալ. Տ. Վարդան Քհնյ. Աղաբաբայեան, Մարգարիտ Ալեքսանդրեան, Երեմ եւ Մագի Յարութիւնեաններ, Այրինէ եւ Արին Մելքոնեաններ, Սոնիկ Կիրակոսեան, Ժենիա Կիրակոսեան, Ժանօ Կիրակոսեան, Ալեքս Անգերինա Փանոսեան, Մարգարիտ Մովսիսեան, Արսէն Շահբազեան, Զանի Թորոսեան, Գամեր Դիլանչեան, Գալիա Դիլանչեան, Գառնի Դիլանչեան, Լուսինէ Թորոսեան, Մհր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Մանուշ Պօղոսեան, Պետրոսեան ընտանիք, Այլին Բաբայեան, Սոնիկ Յակոբեան, Օֆֆիկ Սիմոնեան, Արին Քէշիշեան, Շուշիկ Փանոսեան, Խաթուն Յովսէփեան, Արմոնդ Գալստեան, Մարտիրոս Ծատուրեան, Հովիկ եւ Գրեթա Միրզայեաններ, Հայկազ Պետրոսեան, Արմոնդ Մինաս Խաչիկեան, Ալենուշ Սիմոնեան, Պօղոս Յովսէփեան, Էջմին Խաչիկեան, Քեւին Օհանեան, Բաֆֆի, Ռուբէն եւ Դաւին Վարդանեաններ, Մատթէոս եւ Էմմա Պարսամեաններ, Ժենիկ Քէշիշեան, Մանաս Աղախանեան, Արսէն Իսաղուլեան, Արամէ Նաւասարդեան, Էդիկ Ֆամիլ Աւագ, Մեղեդի Մանուկեան, Փաթրիկ Ակոն, Քաթրին Ակոն, Սամսոնեան, Արթին Պօղոսեան, Սիփան Անդրիասեան, Հովիկ Բարսեղեան, Վահիկ Փանոսեան, Սարգիս եւ Գէորգ, Համասփիւռ Մարգա-

րեան, Արմինէ Խաչատրեան, Յարութ Քէշիշեան, Արգիշտի Մարգարեան, Մելինէ Տէր-Յովհաննիսեան, Նահիդ Հաւայի

- 150,000-ական ռիալ. Ռիմա Դիլանչեան, Արգամ Յովսէփեան, Վեդի Օրօջեան, Սերինէ Յակոբեան, Վարդուշ Սարուխանեան, Հենրիկ Գրիգորեան, Ժորժիկ Դաւթեան

- 100,000-ական ռիալ. Էրիքա Գէորգեան, Հովիկ Ղարիբեան, Շողիկ Քէշիշեան, Խաթուն Խաչիկեան, Սերոժ Յովհաննիսեան, Սոնիկ Նահապետեան, Արէն Բարսեղեան, Շամիր Գաբրիէլեան, Գառնիկ Բաղդասարեան, Եղսօ Ներսիսեան, Թամար Գրիգորեան, Ղազար եւ Արաքս Թահմազեաններ, Զարթիկ Սուքիազեան, Սոնա Սուքիազեան, Բալիկ Մարտիրոսեան, Արազ Ղազարեան, Շաքէ Բաբումեան, Մարօ Տէր-Մարտիրոսեան, Նւարդ Վարդանեան, Ֆլորա Ալլահվերդեան, Վազգէն Խուդավերդեան, Սերինէ Թահմազեան, Մարիթա Սարուխանեան, Սեդա Այւազեան, Սերլի Պարսամեան, Յովհաննէս Թորոսեան, Օրբէլ Էդուարդ Տէր-Եղիշեան, Ովսան Ղարախանեան, Մահշիդ Ֆութուհի, Նահիդ Շահիդ

- 50,000-ական ռիալ. Մատթէոս Շահբազեան, Երւանդ Խաչիկեան, Երանուհի Շահբազեան, Փարւանէ Զարէ, ոմն

- 40,000 ռիալ. Ծովինկ Շահնազարեան

- 6 հատ կերակուրի պնակ եւ 12 հատ գդալ-պատառաքաղ. Հրաչիկ Ղազարեան-Միրզախանեան

- 6 հատ ապակեայ ջրի սափոր. Մասիս Մկրտչեան

Մէկական գառ. Գառնիկ Յակոբեան, Մովսիսեան եւ Պօղոսեան ընտանիքներ, Ժորա Մելիքեան, Արթին Քէշիշեան, Ժանեթ Մինասեան, Հերոս Սիմոնեան, Շահէն Գալստանեան, Խանում Դաւթեան, Լեւիկ եւ Մադլեն Թորոսեաններ, Նարեկ Թորոսեան, Սերոժ Շահիջանեան

Փոխան մատաղի

- 3,000,000 ռիալ. Դեհխոդա

- 1,500,000-ական ռիալ. Արգին Տէր-Մկրտչեան, Մարինա եւ Կարէն Ղարախանեաններ

- 1,000,000-ական ռիալ. Արթին եւ Մանիա Վարդանեաններ, Սրբուհի Ղարիբեան, Սեւանա Յարութիւնեան, Մուշեղ Այւազեան

- 500,000-ական ռիալ. Արտուշ Սիրջանեան, Անաշէ Առաքելեան, Գեւիկ եւ Գեղանի Ղարիբեաններ

- 300,000 ռիալ. ոմն

- 200,000 ռիալ. Սոնիա Միրզաբէգեան

- 100,000-ական ռիալ. Ռազմիկ Յակոբեան, Արմինէ Թահմազեան

Խաչի զոյգելու առթիւ

- 200,000 ռիալ. Արմէն Ղուկասեան,

- 100,000-ական ռիալ. Էդուարդ Թեոմադօ, Արմէն Կարապետեան

Ս. Աստուածածին եկեղեցի

Խաղողօրհնէք

- 1,000,000 ռիալ. Մառիէթ Խոջեմալ

- 500,000-ական ռիալ. Նորիկ Յարութիւնեան, Տիգրանուհի Ղեւեան, Մադլէն Ղարիբեան, Իւեթ Շիրւանեան

- 300,000-ական ռիալ. Մաքրուհի Մարկոսեան, Մանուշ Մարգարեան, Յովսէփ եւ Խաթուն Մելիքեանների յիշատակին

- 250,000-ական ռիալ. Պօղոս Թահմազեան, Ժենիկ Յակոբեան

- 200,000-ական ռիալ. Սոնիա Միրզաբեգեան, Սեդա Այւազեան, Անժել Անդրիաս, Վանէ Յովսէփեան, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Զւարդ Թահմազեան, Մարօ Ծատուրեան, Խաթուն Յովսէփեան, Ալվարդ Զարգարեան, Քեւին Մինաս Խաչիկեան, Լէօ Շահիջանեան, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ, Փամելա Քէշիշեան, Վարդուհի Ղարախանեան, Մհեր Մարգարեան, Արւին Թահմազեան, Մարալ Խաչիկեան, Նազիկ Միրզայեան, Աբգարեան, Սեդա Բաբայեան

- 100,000-ական ռիալ. Հերմիկ Ղարիբեան, Սօսէ, Սիւնէ եւ Սարինէ Ղարիբեաններ, Մարիամ Յակոբեան, Ռայմոնդ Մինաս Խաչիկեան, Ովսան Ղարախանեան, Բալիկ Մարտիրոսեան, Հրանուշ Փանոսեան, Սելինէ Օրդուբեգեան, Արեգա Յարութիւնեան, Հռիփսիկ Թորոսեան, Անահիտ Հայկունեան, Հենրիկ Յարութիւնեան, Շամիր Փափելեան, Սրբուհի Մովսէսեան

- 50,000 ռիալ. Շաւարշ

Ս. Մինաս եկեղեցի

- Մէկ մեծ եւ երկու փոքր բածկաթոռներ քահանայ հօր գրասենեակի համար. Զանսոն Աղաբաբայեան

Խաղողօրհնէք

- 500,000 ռիալ. Տիգրանուհի Ղեւեան

- 200,000 ռիալ. Անի եւ Թենի Շահիջանեաններ

- 150,000-ական ռիալ. Արեւիկ Ալլահվերդեան, Անի Թորոսեան

- 100,000-ական ռիալ. Կարապետեան, Եզնիկ Ղարիբեան, Էլօ Հայրապետեան

Վանուշ Տէր-Յովհաննիսեան-Հայրապետեանի մահուան քառասունօրեակի առթիւ

- 1,000,000-ական ռիալ. Հրանդ Տէր-Յովհաննիսեան, Համայեակ Նաւասարդեան

Զարդար Թահմազեան-Մարեանի յիշատակին

- 500,000 ռիալ. «Արմէն» կրթահամալիրի տեսչութիւն

- 200,000-ական ռիալ. Մկրտիչ Յարութիւնեան, Արաքս եւ Քլար Խաշաքեաններ, Շաքէ Բաբումեան, Անահիտ Քէշիշեան

- 100,000-ական ռիալ. Աբգար Ղազարեան, Ծաղկուշ Թահմազեան

Մեսրոպ Այւազեանի յիշատակին

- 1,000,000 ռիալ. Դիանա Ղազարեան- Խաչիկեան

- 300,000 ռիալ. Նապիկ Մելիքեան

- 150,000 ռիալ. Սաքօ եւ Թալին Սիմոնեաններ

Մանուշ Ասատրեանի յիշատակին

- 200,000 ռիալ. Արմինէ Թորոսեան

Էլիրա Ղազարեանի յիշատակին

- 500,000-ական ռիալ. Միքայէլ Զոհրաբեան, Աւօ եւ Թագուշ Բաշիկեաններ, Վիգէն Մարգարեան, Այւազեան ընտանիք

- 300,000 ռիալ. Համիկ Ալեքսանդրեան

- 200,000-ական ռիալ. Մարիկ Մկրտչեան, Վիկտոր Յովսէփեան

Լուսիկ Ոսկանեան-Մարտոյեանի յիշատակին

- 1,000,000-ական ռիալ. Արաքս եւ Ռազմիկ Մկրտչեաններ, Ծաղկուշ Համբարձեան

- 500,000-ական ռիալ. Ս. Ա. Վանքի «Կոմիտաս» երգչախումբ, Վիգէն Ղազարեան, Աւօ եւ Թագուշ Բաշիկեաններ, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Ալեքսեան ընտանիք, Խէչօ եւ Ժանեթ Խուդավերդեաններ, Մէրի Մելիքեան, Արբի եւ Մելինէ Բաբումեաններ, Սերժիկ Վարդանեան, Այւազեան ընտանիք

- 400,000 ռիալ. Ասպետ եւ Լորեթա Վարդանեաններ

- 300,000-ական ռիալ. Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային միաւորի վարչութիւնից, Մկրտիչ եւ Անիթա Աւետեաններ

- 200,000-ական ռիալ. Հռիփսիկ Համբարձեան, Կարօ Շահբազեան, Էմմիկ Պօղոսեան- Զոհրաբեան, Օֆֆիկ Գէորգեան, Լիդուշ Թէյմուրեան, Աւուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Արշալոյս Խուդավերդեան, Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Ռազմիկ Ալեքսանդրեան, Աշխէն Մկրտչեան, Երանուշ Թահմազեան, Ադրինէ Խաչատրեան, Վարդուհի Ղարախանեան, Օդէթ Բաղդասարեան- Ծատուրեան, Սեդիկ Բալեան

- 150,000 ռիալ. Սերոժ եւ Շաքէ Խանլարեաններ

- 100,000-ական ռիալ. Արաքս Աւետեան, Հայկազ, Հրանուշ եւ Շաքէ Ղարիբեաններ, Սոնիկ Կիրակոսեան, Գասպար եւ Սալիկ Մարտիրոսեաններ

Վարդանէս Աղամալեանի յիշատակին

- 300,000 ռիալ. Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն

Ն.Զ. Հայոց գերեզմանատան բարեկարգման մարմին

- 2,500,000 ռիալ. Ֆիլիփ Վելթի
- 500,000-ական ռիալ. Լուսիկ Յովհաննիսեան, Սաքօ Յակոբեան՝ Թագուշ Յակոբեանի յիշատակին

Արմենուհի Բաղդասարեանի յիշատակին

- 500,000-ական ռիալ. Սուրէն Սէթ-Աղայեան, Բալիկ Թահմազեան, Վահիկ Թահմազեան, Պօղոս Թահմազեան
- 300,000 ռիալ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեան
- 200,000-ական ռիալ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեան, Հերոս Մինասեան
- 150,000 ռիալ. Համաս Աբրահամեան

Ն.Զ. Հայոց ազգային «Արմէն» տարրական դպրոց

- 50,000,000 ռիալ. Մաղլեն Աբրահամեան
- 10,000,000 ռիալ. Յասմիկ Դաւթեան
- 600,000 ռիալ. Դիանա Փանոսեան
- 500,000-ական ռիալ. Արմինէ Յովսէփեան, Զարեհ Փանոսեան
- 300,000-ական ռիալ. Արմոնդ Փանոսեան, Վահագն Թահմազեան, Արմինէ Մարկոսեան
- 200,000 ռիալ. Արմինէ Մարկոսեան

Գիտելիքների մրցոյթ

- 500,000-ական ռիալ. Սիսիան Քալանթար Օհանեան, Թադէ Թահմազեան
- 300,000 ռիալ. Բրայան Փանոսեան
- 250,000-ական ռիալ. Մեղրի Փանոսեան, Արթուր Քամարզարեան
- 200,000-ական ռիալ. Ալէն Ղեւոնդեան, Մհեր Մինասեան, Լէօ Շահիջանեան, Լիանա Ղազարեան, Վահագն Դաւթեան, Անի Սիմոնեան, Արփինէ Մովսիսեան, Յասմիկ Տէր-Մարտիրոսեան, Փաթրիկ Ակոռ, Մինէլի Յակոբեան, Մորենա Դաւթեան
- 150,000 ռիալ. Լիլիթ Յովսէփեան
- 100,000 ռիալ. Արսինէ Հայրապետեան

Աւարտական հանդէս

- 1,000,000 ռիալ. Լիլիթ Գէորգեան
- 500,000-ական ռիալ. Թադէ Թահմազեան, Մինելի Յակոբեան, Բրայան Փանոսեան, Անի Սիմոնեան, Նարինէ Խուդաբախշեան, Վահագն Թահմազեան, Արգիշտ Քեշիշեան
- 300,000-ական ռիալ. «Քանանեան» դպրոցի ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ, Արամէ Ալեքսանդրեան, Մինէ Յարութիւնեան, Խաթունիկ Ալեքսանդրեան
- 200,000-ական ռիալ. Միրօ Խուդավերդեան, Դաւիթ Յովհաննիսեան, Արսինէ Հայրապետեան, Նոյեմի Ղարիբեան, Փաթրիկ Ակոռ, Փարելի Ղազարեան

Ն.Զ. Հայոց ազգային «Քանանեան» դպրոց

- 1,000,000 ռիալ. Անահիտ եւ Նարբէյ Քոչարեաններ՝ Լուսիկ Ոսկանեան-Մարտոյեանի յիշատակին փոխան ծաղկեպսակի

Հայ ուս. Զհարմահալ միութեան Ն.Զ. մասնաճիւղ

- 50,000,000 ռիալ. Հայ ուս. Զհարմահալ միութեան կենտ. վարչութիւն
- 5,000,000 ռիալ. Վարուժ Ղարախանեան
- 1,500,000-ական ռիալ. Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւն, Վաչէ, Նոռա եւ Լէօ Շահիջանեաններ
- 1,100,000 ռիալ. Կարօ եւ Հիլդա Խուդաբախշեաններ
- 1,000,000-ական ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն, Սոնիա Միրզաբէկեան, Արսինէ եւ Նորիկ Աբդալեաններ, Հրանտ Խուդաբախշեան, Տիգրանուհի Ղեւեան, Աղասի Դաւթեան
- 500,000-ական ռիալ. Սպահանի հայոց թեմի Եկեղեցեաց վարչութիւն, Ն.Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Նիկոլ Մուսախանեան, Ծաղիկ Եդգարեան, Ռիթա Մինասեան, Մարտիրոս Գասպար-Ղիասեան, Վահան Վարդեւանեան, Սալիկ Մինասեան, Վարդուհի Ղարախանեան, Սեդիկ Բալեան, Նուարդ Կիրակոսեան, Հրաչ Ղարախանեան, Հայդուկ Մարգարեան, Էդնա Փուլադեան, Ցոլակ Յարութիւնեան, Կարօ եւ Մարօ Պետրոսեաններ, Մհեր եւ Վեհանոյշ Խուդաբախշեաններ, Արեւիկ Ալլավերդեան, Արամ Բաբումեան, Ալեքս Աբդալեան, Սեդա եւ Այլին Աբդալեաններ, Արթին Անտոնեան՝ իր հօր՝ հանգուցեալ Վարդան Անտոնեանի յիշատակին
- 300,000-ական ռիալ. Արշալոյս Խուդավերդեան, Ֆլորա Ալլավերդեան, Ֆրիդա Ալլավերդեան, Գեղանի Ղարիբեան, Էմիկ Բալեան
- 250,000-ական ռիալ. Ադրինէ Խաչատրեան, Եսայի Թորոսեան
- 200,000-ական ռիալ. Արմինէ Փանոսեան, Սեւակ Խաչատրեան, Նուարդ Վարդանեան, Լիդա Յակոբեան, Պերճուհի Քամարզարեան, Էլսիկ Պետրոսեան, Սաթօ Վարդանեան, Բիւզանդ Բաբումեան, Աննիկ Ալեքսանդրեան, Կիտուշ Պետրոսեան, Անուշ Օհանեան, Ալբերտ Ղազարեան, Վանէ Թորոսեան
- 150,000-ական ռիալ. Համասփիւռ Մարգարեան, Դրօ Տէր-Մարտիրոսեան
- 100,000-ական ռիալ. Ովսան Ղարախանեան, Ժենիա եւ Սեւանայ Մկրտչեաններ

Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւն

- Մէկ գորգ, մէկ ափսէ եւ սրբապատկեր. զաւակներ՝ իրենց մօր՝ հանգուցեալ Թամար Կիրակոսեան-Թահմազեանի յիշատակին

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային առաջնորդարանի Հանրային կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Այիք»-ի թղթակիցները, «Արարատ» միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» միութեան մասնաճիւղինը՝ Վիոլետ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։

Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

خليفه گری ارامنه اصفهان و جنوب ايران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98–31–36243471-2
Fax: +98–31–36270999

1915 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻՑ